Եւ այսօր, դեռ պաղեստինեան պետութիւն մը գոյութիւն չունի: Ընդհակառակը. հրեաները իրենց ընդունած Ինքնավար Պաղեստինն ալ կը քանդեն: Եւ 40 տարիներէ ի վեր հրեաներուն հետ խաղաղութիւն հաստատելու երազը հետապնդող Արաֆատն ալ, այսօր կը մերժեն, և նոր պաղեստինեան ղեկավար մը կ'ուզեն, որ այս նոր ղեկավարն ալ, Արաֆատին ըրածնունն նման, 40 տարիներ օրօրեն և քնացնեն:

Եւ ամենակարեւոր լուրը՝ 12 Մայիս 2002-ին, Ծարոնի «Լիքուտ» ազգայնական կուսակցութիւնը մերժեց պաղեստինեան պետութիւն մը ստեղծելու գաղափարը:

Ծարոնին կուսակցութեան տուած այս նոր որոշումը, շառաչուն ապտակ մըն է տրուած ոչ միայն պաղեստինցի, այլև՝ Արաբ ամբողջ ժողովուրդներուն:

* *

Հրեաներուն Պաղեստինի մէջ կատարած անմարդկային, անխիղճ և ամբարտաւան արարքները, հակառակ սիոնիստական լրատուութեան ցանցին իրականութիւնները փոխելու և քօղարկելու նպատակով տարած ջանքերուն, կը կարծենք. թէ Արեւմտեան Աշխարհի մէջ, մանաւանդ Եւրոպայի մէջ, իրատես ու սթափ որոշ հասարակութիւն մը ինքնագիտակցութեան բերած է:

Եւրոպայի մէջ, ինքնագիտակից հասարակութիւն մը, կը թուի. թէ շատ լաւ հասկըցած է, սիոնիստներուն եւրոպական երկիրներուն մէջ, մարդկային իրաւունքներու քողի տակ, այդ երկիրներուն Ազգային դրոշմը խաթարելու համար տարած աշխատանքները:

Մենք կը հաւատանք, որ Եւրոպայի մէջ, ազգայնական ու ազգայնամոլ երանգով կուսակցութիւններուն տրուած քուէներուն շատնալը, ժողովուրդներուն ազգային ինքնապաշտպանութեան արթնցող բնագոյն ու ասոր պայքարին արդիւնքներն են:

Ասոր օրինակները տեսնուեցան Աւստրիոյ, Դանիոյ, Իտալիոյ և վերջերս՝ 21 Ապրիլ 2002-ին ալ՝ Ֆրանսայի մէջ:

Այս ազգային ինքնապաշտպանութեան պայքարին վերջին ապացոյցը, 15-5-2002-ին, Հոլանտայի մէջ կատարուած ընտրութիւններուն արդիւնքն է:

Այս ընտրութեանց մէջ, 6 Մայիս 2002-ին Հոլանտայի մէջ սպանուած Փիմ Ֆորթիլյն-ին «Փոփուլիստ» կուսակցութիւնը, Հոլանտայի Զրիստոնեայ Դեմոկրատ կուսակցութիւնէն ետք գալով, երկրին երկրորդ կուսակցութիւնն դառնալու չափ քուէ ստացաւ:

Հակառակ որ սիոնիստները, Ֆրանսայի մէջ Լը Փէնից դէմ ըրածնունն նման, Հոլանտայի մէջ ալ, այս կուսակցութեան «ցեղապաշտ» կուսակցութիւն մը ըլլալուն մասին անվերջանալի քարոզչութիւններ կատարած էին:

Սուտ և անարդար քարոզչութիւն մը [սա ըսել չէ, որ տուեալ կուսակցութեան բոլոր գաղափարները լաւ և ընդունելի են]: Բայց կուգայ տեղ մը, ուր այդ քարոզչութիւնը այլևս չի կրնար ամբողջ ժողովուրդը խաբել:

Եւ որոշ գիտակից ու երթալով բազմացող հասարակութիւն մը կը հասկնայ, թէ սիոնիստական այս քարոզչութիւնները, սնամէջ պոռոտախօսութիւններ են միայն:

ՈՒՒՍԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ
 ՅՈՒՆԱՍՏԱՆ
 PATRAS, MESSOLONGI-PILOS
 OLYMPIA, SAMOS ԿՂԶԻ ԵՒ
 TESSALONIQUE

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ
 [ԿՐԷԺ ՈՌԻՔԷՆԵԱՆ]

ՊԻՏԻ ԸՍՈՒԻ ԹԵՐԵԻՍ, ԹԷ ԻՆՉՈ՞Ւ ՈՒՒՍԱ-
 ԳՐԱՑՈՒԹԻՒՆ՝ ԴԷՊԻ ՅՈՒՆԱՍՏԱՆ... ԵՒ Ո՞՛Ն
 ՀԱՅԱՍՏԱՆ:

ԽՈՐԶԻՆ ՄԷՋ ԾԻԾԴ Է ԱՅՍ ՀԱՐՑՈՒՄԸ:
 ԲԱՅԾ ՄԵՐ ՀՈԳԻՆ ՉԻ ՀԱՆԴՈՒՐԺԵՐ ԵՒ ԾԱՏ
 ԶԻՉ ՍԻՐՏ Կ՝ՈՒՆԵՆԱՅ ՏԵՍՆԵԼՈՒ ԱՅ-
 ՍՕՐՈՒԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ, ՈՒՐ ՆԵՐԿԱՅ ԴԱՇ-
 ՆԱԿՑԱԿԱՆԱՄԷՏ ԻԾՄԱՆՈՒԹԻՒՆԸ, ԶԻՉ ՄԸՆ
 ԱԼ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՄԷԿ ՄԱՍԻՆ ՏԳԻՏՈՒԹԵՆԷՆ
 ՕԳՏՈՒԵԼՈՎ, ՀԵՐՈՍԱՑՈՒԾԱՑ Է ԴՐՕ-Ի ԵՒ
 ՆԺԴԵՀԻ ՆՄԱՆ ԱՏԵՆ ՄԸ ՀԱՅՐԵՆԱԿՆԱՍ
 ՄԵՂՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԷՋ ԳՏՆՈՒԱԾՆԵՐԸ,
 ՈՒՐ ԱՐԵԻՍՈՒՏԶԵԻ ԳՈՐԾԱԿԱԼ ԵՒ ՀԱՅ ԳԱՂՏԻ
 ԲԱՆԱԿԸ ԶԱՆԴՈՂՆԵՐԷՆ ՍՕՆԹԷ ՄԵԼԵՈՆԵԱՆԸ ՀԵՐՈՍԱՑՈՒԱՑ Է, ՈՒՐ, ԿԱՐԷՆ
 ՏԵՄԻՐՃԵԱՆԸ, ՎԱՋԳԷՆ ՍԱՐԳԻՍԵԱՆՆ ՈՒ ԻՐԵՆԾ ԸՆԿԵՐՆԵՐԸ ՄՊԱՆՆՈՂ ԴԱՀԻՃ
 ՆԱՅԻՐԻ ՅՈՒՆԱՆԵԱՆԸ ԳՐԵԹԷ ՀԵՐՈՍԱՑՈՒԱՑ Է, ՈՒՐ, ՀԱՅԿԱԿԱՆ ԾԵՂԱՍ-
 ՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՈՒՐԱՑՈՂ ԻՍՐԱՅԷԼԻ ԴԵՍՊԱՆՈՒՀԻ ԳՈՀԷՆԸ, ՄԻՆՉԵԻ ԱՅՍՕՐ, ՉԷ
 ՎՈՆՏՈՒԱՑ:

ԲԱՅԾ, ԱՅՍ ԸՍԵԼ ՉԷ, ԹԷ ՄԵՆՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆԴԷՊ ՄԵՐ ՈՒՆԵԾԱՑ ՀՈԳԵԿԱՆ
 ՈՒ ՆԻԹԱ-ԲԱՐՈՑԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՉԵՆՔ ԿԱՏԱՐԵՐ:
 ԸՆԴՀԱԿԱՌԱԿԸ, ԿԸ ԶԱՆԱՆՔ, ՄԵՐ ԿԱՐՈՂՈՒԹԵԱՆ ՉԱՓԵՐՈՎ, ՕԳՆԵԼ ՀԱՅԱՍ-
 ՏԱՆԻ ԿՐԹԱ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ:

ՄԵՆՔ ԿՂ ԿԱՆԱՏԱՆՔ-ՈՐ ՅՈՒՆԱՍՏԱՆ, ԻՐՐ ԱՉԽԱՐԿԻ ԶԱՊԱՋԱԿՐԹՈՒԹԵԱՆ
 ՍՏԵՂԾՄԱՆ ԳԽԱՆՈՐ ԿԵՊՐՈՆ, ԱՆՓՈԽԱՐԻՆԵԽԻ և սքանչելի ուխտատեղի մըն է:

ԻՆչպէ՛ս չհիանալ աշխարհի մշակոյթի եւ գիտութեան հիմերը նետած երկրի
 մը:

ԻՆչպէ՛ս չհիանալ, աշխարհի իսկական բարոյական արժէքները՝ իրենց
 մտածումներով, իրենց գրութիւններով, իրենց թատերկներով ստեղծած տա-
 ղանդներու երկրի մը:

Միայն Սոկրատիսն ապրած քաղաքը՝ Աթէնքը տեսնելու համար, կ'արժէ Յու-
 նաստան երթալ:

Սոկրատիսն գաղափարները տեղւոյն վրայ վերլիջելու և մանաւանդ՝ իր անի-
 րաւաբար մահուան դատապարտուելէ ետք, թոյնի բաժակը խմած վայրը տես-
 նելու համար, կ'արժէ Յունաստան երթալ:

Բայց մեր այս տարուան դէպի Յունաստան ուխտագնացութեան նպատակը,
 Յունական դասական յուշարձանները այցելելէ զատ, տեսնել էր նաեւ այն
 վայրերը, ուր 1821-ին Յոյն ազատատենչ ժողովուրդը, թրքական լուծէն փրկուե-
 լու համար, բռնկեցուցած էր Յեղափոխութեան կրակը:

Յոյն հայրենասէրներուն 1821-ի Յեղափոխութեան յարիներուն թուրքերուն
 դէմ մղած դիւցազնական պայքարը, շարունակութիւնն է 2500 տարիներ առաջ,
 դասական Յունաստանին՝ MARATHON-ի, THERMOPILE-ի և SALAMINE-ի մէջ,
 ներխուժող Պարսիկներուն դէմ մղած ինքնապաշտպանական դիւցազնական
 պատերազմներուն:

**ՈՒՒՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ
ՅՈՒՆԱՍՏԱՆ
PATRAS, MESSOLONGI-PILOS
OLYMPIA, SAMOS ԿՂԶԻ ԵՒ
TESSALONIQUE**

**ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ
[ԿՐԷԺ ՌՈՒԲԷՆՆԱՆ]**

Մենք, մեր սրտին մէջ ունենալով մեր պատմական հայրենիքին ութսուն առ հարիւրին՝ Արեւմտեան Հայաստանին Թուրքերուն կողմէ գրաւուած մնալու ցաւը, ուզեցինք տեսնել և գօտեպնդուիլ թրքական խժոժութիւններուն ենթարկուած ուրիշ մէկ ազգի մը՝ Յոյներուն ազատութեան համար մղած պայքարի վայրերը, և օրինակ առնել Յոյներէն ու ներշնչուիլ իրենց զոհաբերութեան ոգիէն:

Այս հեռանկարներով՝ 20 Մայիս 2002-ին, օդանաւով մեկնեցանք նախ Աթէնք, և յետոյ՝ ինքնաշարժով անցանք PATRAS: Յունաստանի հարաւային մասին՝



Մետլոնկի-հերոսներու դամբարանը

PELEPONNESE-ի կեդրոնը եղող PATRAS-ը, Աթէնքէն և Սելանիկէն յետոյ, Յունաստանի երրորդ մեծ քաղաքն է: Նաւահանգիստ քաղաք մը եղող Փաթրասը, սա վերջին տարիներուն, շատ յառաջդիմած և ճոխացած է:

Մանաւանդ՝ Իտալիոյ հետ կառաքարձերով (Ferry-boat) երթելէկին անհաւատալի զարգացումը, Իտալիան Յունաստանին շատ մօտեցուց:

Այս ձեւով Փաթրասը՝ Արեւմուտքը Արեւելքին կա-

պող ամենակարեւոր կեդրոնի վերածուեցաւ:

[Այս յառաջդիմութիւնը կը «պարտի» քիչ մըն ալ Եուկոսլաւիոյ ողբերգութեան: Որովհետեւ դէպի Եւրոպա տանող Պալքաններու երթելէկի ճամբան, Եուկոսլաւիոյ պատերազմին պատճառաւ, տասը տարիէ ի վեր գոց էր]:

Փաթրաս, Յունական պատմական հին քաղաք մը եղած է:

Բայց իր բուն կարեւորութիւնը կու գայ այն պատմական դէպքէն՝ ուր 1821-ին, Թուրքերուն դէմ մղուած ազատութեան պայքարի օրերուն, դիմադրութեան առաջին ազդանշանը տրուած է Փաթրասի շուրջ եղող AGIA LAVRA վանքին մէջ:

25 Մարտ 1821-ին, Փաթրաս-ի METROPOLITE (Արքեպիսկոպոս)՝ Ժերմանօս, Փաթրաս-ի շուրջ՝ Զալավրիթայի Ակիա Լավրա վանքին առջեւ գտնուող սօսիի ծառին տակ կը քարոզէ ժողովուրդին: Յետոյ, վանքին եկեղեցիին մէջ կ'օրհնէ կապոյտի վրայ ճերմակ խաչերով Յունական անկախութեան դրօշակը [ներկայի յունական դրօշը] և վեր կը բարձրացնէ զայն ի նշան Յեղափոխութեան:



Ազգային հերոս Մարքոս Պոթզարիսի դամբարանը

Եւ GERMANOS, Փաթրաս-ի մէջ, Յոյն ժողովուրդին կողմէ «կեցցէ» բացագանչութիւններով կը դիմաւորուի:

ՈՒՒՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ
ՅՈՒՆԱՍՏԱՆ
PATRAS, MESSOLONGI-PILOS
OLYMPIA, SAMOS ԿՂՋԻ ԵՒ
TESSALONIQUE

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ
[ԿՐԷԺ ՌՈՒՔԷՆՆԱՆ]

Թրքական հակազդեցութիւնը, իրենց բարբարոսական սովորութեան համեմատ կ'ըլլայ՝ կ'այրեն AGIA LAVRA վանքը: Եւ կ'այրեն PATRAS քաղաքը: Բայց այլեւս, ամէն բռնութիւն անօգուտ է: Յունական անկախութեան առաջին քայլերը նետուած են:

Եւ 1822-ին՝ Յոյն Յեղափոխականները EPI-DAURE-ի համաժողովին մէջ, կը հռչակեն Յունաստանի անկախութիւնը:

Բայց, իսկական անկախութեան ճամբան շատ երկար էր: Բազում զոհաբերութիւն և սանաւանդ արիւն կը պահանջէր:

Եւ Յոյն Յեղափոխականները ցոյց տուին այս զոհաբերութեան ոգին, և տուին իրենց արիւնը՝ Յունաստանի Թուրքերու բռնագրաւումէն ազատագրութեան համար:

Յունական անկախութեան պայքարին մէջ, ամենէն կարեւոր կեդրոնը՝ Փաթրաս-ի դիմացի ծոցը գտնուող MESSOLONGI- բերդաքաղաքն է:

MESSOLONGI-ի յոյները, իրենց մղած անկախութեան պայքարին մէջ, գերմարդկային կեցուածք ցուցաբերեցին:

Այս բերդին Յոյն պաշտպանները ապացուցանեցին, որ իրենք, MARATHON-ի, THERMOPILE-ի և SALAMINE-ի հերոսներուն շառափղներն են:

Թէ՛ ինչպէ՞ս. ջանանք պատմել: Թուրքերը Յունական յեղափոխութիւնը ճգնելու համար, ըստ իրենց սովորութեան, շատ մեծ խժժութիւններու կը դիմեն:

Եւ նոյնպէս՝ Մետլոնկի բերդաքաղաքը ապաստանող շրջակայ գիւղերու Յոյն ժողովուրդը ջարդելու համար, 1822-ին կը պաշարեն Մետլոնկին:

Բայց յոյները, MARKOS BOTZARIS-ի առաջնորդութեամբ, շատ բացառիկ դիմադրութիւն ցոյց կու տան:

Եւ Թուրքերը երկու տարի պաշարումէ յետոյ ալ, չեն կրնար գրաւել բերդը:

Եւ Մետլոնկիի համբաւը, իբր հե-



Լորտ Պայրըն՝ յունական տարագով և սուր գրկած... որպէս յոյն ժողովուրդի ազատագրական պայքարի մասնակից, ընդդէմ բռնագրաւիչ Թուրքիոյ:

**ՈՒՒՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ
ՅՈՒՆԱՍՏԱՆ
PATRAS, MESSOLONGI-PILOS
OLYMPIA, SAMOS ԿՂԶԻ ԵՒ
TESSALONIQUE**

**ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ
[ԿՐԷԺ ՌՈՒԲԷՆԵԱՆ]**

ամբողջ Երոպայի մէջ:

Եւ Յունուար 1824-ին, Անգլիայէն Մետլոնկի կու գայ, մեծ բանաստեղծ LORD BYRON-ը:

Պայրընի իրենց թիկունք կանգնելու համար Մետլոնկի ժամանելը, բերդին պաշտպաններուն պայքարի կամքն ու կորովը կը զօրացնէ...

Բայց Լորտ Պայրըն, 19 Ապրիլ 1824-ին, ջերմի հիւանդութեամբ մը, 36 տարեկանին կը մահանայ բերդին մէջ:

Թուրքերուն վերջին յարձակումը կ'սկսի Ապրիլ 1825-ին, 15,000 զինուորներէ բաղկացած Ռաշիտ Փաշայի բանակի ժամանումովը: Մինչդէռ Յոյն-պաշտպաններուն թիւը հազիւ 5000 է:

Բայց յոյներուն բուռն դիմադրութիւնը արգելք կ'ըլլայ, թուրքերուն կողմէ բերդի գրաւուելուն...

Եւ տարի մը յետոյ, Յոյները դե՛ռ կը շարունակեն Թուրքերուն դէմ դնել:

Բայց, Իպրահիմ Փաշա, 10,000 եգիպտացի զինուորներով, կու գայ Թուրքերուն օգնելու:

Յոյներուն, շատ տարիներ շարունակ շըրջապատումէ յետոյ, կը պակսի իրենց ուտեստեղէն և ամէն ինչ:

Եւ Յոյները ստիպւած կ'որոշեն, բերդէն զանգուածային ելք մը (Exodos) կատարել...

Եւ 22 Ապրիլ 1826-ի գիշերը, 9000 հոգի, մեծ մասամբ կիներ և երախաներ՝ դաւաճանի մը կողմէ մատնուելուն պատճառաւ, կը ջարդուին թուրքերուն կողմէ:



Բերդին վերջին պաշտպանները, Ռիստոս Զափսալիսի առաջնորդութեամբ, կը պայթեցնեն վառօդարանը...:

Եւ հազիւ 1800 հոգի կը հասնին 100 քիլոմէթր հիւսիսը գտնուող AMFISSA: Եւ բերդին մէջ մնացած վերջին պաշտպանները CHRISTOS KAPSALIS-ի առաջնորդութեամբ, Թուրքերուն չլանձնուելու համար, վառօդարանը կը պայթեցնեն և կը նահատակուին բերդին փլատակներուն տակ:

Բայց նոյն փլատակներուն տակ կը թաղեն նաե՛ւ, բերդը պաշարող Թուրք զինուորներն ալ:

**

Եւ մենք, այս Յոյն հերոսներուն գիւղաքաղաքը գացինք՝ ուխտագնացութեան: PATRAS-ի մօտ RION-էն կառաքարծով անցանք PATRAS-ի նեղուցը և հասանք ANTIRION, գրեթէ կէս ժամէն:

Անթիրիօն-էն 50 քմ. դէպի արեւմուտք՝ ծովեզերեայ գիւղաքաղաք մըն էր. MESSOLONGI-ն:

Արդէն MESSOLONGI-ի մուտքէն քիչ անդին, մայր պողոտային (Ժարգ՝ էջ 3)

ԿԸ ՀՐԱՊԱՐԱԿԵՆՔ ԹՈՒՐԻՔԵՐՈՒՆ [ԻԲՐ ԹԷ] ՉԳԻՏՑԱԾ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ
 ՍԵՆԱՆԻԿԻ ՄԷՋ ԶԵՐ ՆԱԽԱՅՈՐ ԾՆԱԾ ՏՈՒՆԷՆ ՏՊԱՌՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Քակի մը շարքներ առաջ էր. ձեր նախահայրին ծնած տունին առջեւէն անցանք:
 Ծատ անգամ, կարգ մը չար լեզուներ, ձեր նախահոր Սելանիկ ծնած ըլլալուն պատճառաւ, շատ
 մը տեղի-անտեղի մեկնաբանութիւններ կ'ընեն:

Մանթի իրականութիւն է, թէ՛ հինէն Սելանիկը՝ «ընդ չխառնուած» հրեաներուն և «ընդ ի
 խառնուած հրեաներուն» [այսինքն՝ դաւանափոխ հրեաներուն] մեծաթիւ գտնուած քաղաքն էր:
 Զգե՛ք այս բամբասանքները, և իրականութեան վերադառնա՛ք:
 Մեզի, դպրոցին մէջ սորվեցուցածներուն համաձայն՝ «1900-ներէն յետոյ, իշխանութեան եկող
 բոլոր թուրք ղեկավարները՝ ֆարմասուն են: Ի բացառեալ՝ միայն Մուսթաֆա Քեմալը»
 Մեք ալ հաւատացած էիք այս խօսքերուն:
 Եւ ապացոյցն ալ կար. Մուսթաֆա Քեմալ իշխանութեան գալէ յետոյ՝ ֆարմասունութիւնը արգի-
 լած և բոլոր ֆարմասունական օթեակները զոցել տուած էր:
 Բայց քակի մը տարի առաջ գերմանական մամուլը, հռչակաւոր ֆարմասուններուն անունները
 հրատարակեց: Որոնց մէջ Մուսթաֆա Քեմալին անունն ալ կար:
 Ասոր վրայ, թուրք մամուլը կատղեցաւ: Ի՛նչ խօսքեր, ի՛նչ պողտուքներ՝ գերմանացիներուն դէմ:
 Գերմանացիները բնաւ կարեւորութիւն չտուին: Միայն բան մը ըրին: Ձեր նախահոր իտալական
 օթեակին անդամակցութեան վաւերագիրը հրատարակեցին:
 Անկէ յետոյ, թրքական մամուլը մունջ դարձաւ:
 Այդ պողտուքները, բոլորն ալ, մարեցան:
 Ձեր նախահայրին ծնած տունին առջեւէն անցած միջոցին, երբ այս բաները կը մտածէիք, պա-
 տին վրայ տեսանք մարմարէ արձանագրութիւն մը, որուն մէջ չորս լեզուներով հետեւեալ տողերը
 գրուած էին:
 «Թուրք Ազգին ստեղծիչը և Պալքանեան միութեան պաշտպանը՝ Մուսթաֆա Քեմալը այս տան
 մէջ ծնած է»:
 Այս յիշատակ-արձանագրութեան մէջ ըսուածները շատ ծիշդ են:
 Ձեր նախահայրը 1923-ին, մինչեւ այն ատեն գոյութիւն չունեցող ազգ մը ստեղծեց:
 Մինչեւ 1918-ը Օսմանցիներ էիք: Յոյն, հայ, արաբ, քիւրտ, լազ ժողովուրդներու խառնուրդ մը:
 Թուրք ըսուածները՝ փոքրամասնութիւն էին:
 Եւ 1923-ին, մէկ օրէն միւսը, «Թուրքիա»ի վերածուցաք: Ինչպէ՞ս. անտեսանլի՛ ուժերուն շնորհիւ:
 Անտեսանլի ուժերը ձեր նախահայրին օգնեցին:
 1918-ին Օսմանեան կայսրութիւնը կործանած էր: Եւ ամէն բան կորսնցուցած էիք, բայց քակի
 մը տարի յետոյ, վերակենդանացաք և կրկին Անթուրիան ձեռք անցուցիք:
 ԿԵՑՑԷ ՄՈՒՍԹԱՓԱ ՔԵՄԱԼԸ, ԲԱՑՑ ՄԱՆԱԽԱՆԻ՛ ԿԵՑՑԵՆ ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ՈՒժԵՐԸ:
 [Ծարուսակելի]

Յ. Չ.

TÜRKLERİN (SÖZDE) BILMEDİKLERİ GERÇEKLERİ AÇIKLIYORUZ
 SELANIKTE ATABANINIZIN DOĞDUGU EVDEN İZLENİMLER

BİR KAÇ HAFTA EVVEL, ATABANINIZIN DOĞDUGU EVİN ÖNÜNDEN GEÇTİK.
 ÇOGU ZAMAN, BAZI SOM AGIZLILAR, ATABANINIZIN SELANIKTE DOĞMASI SEBEBİ İLE BİR ÇOK GEREK-
 LI, GEREKSİZ YORUMLARDA BULUNURLAR. MALÛM YA. ESKİDEN SELANIK, SU KATILMAMIS YAHUDİLERİN
 VE SU KATILMIS YAHUDİLERİN (AÇIKÇASI DÖNMELEİN) ÇOK BULUNDUGU BİR SEHIR İDİ.
 BIRAKALIM BU DEDİKODULARIDA, GERÇEKLERE DÖNELİM. BIZE OKULDA ÖĞRETTİKLERİNE GÖRE
 "1900-LARDAN SONRA İKTİDARA GELEN BÜTÜN TÜRK LİDERLERİ FARMASONDUR, YALNIZ MUSTAFA KEMAL
 HARIÇ". BİZ DE İNANMISTIK BU SÖZLERE. VE İSPATI DA VARDI. MUSTAFA KEMAL İKTİDARA GELDİKTEN
 SONRA FARMASONLUGU YASAKLAMIS VE BÜTÜN FARMASON LOCALARINI KAPATMISTI.
 FAKAT BİR KAÇ SENE EVVEL ALMAN BASINI, MESHUR FARMASONLARIN İSİMLERİNİ YAYINLADI. VE BUN-
 LARIN İÇİNDE MUSTAFA KEMALIN İSMİ DE VARDI.
 BUNUN ÜZERİNE TÜRK BASINI KÖPÜRDÜ. NE LAFLAR NE YAYGARALAR ALMANLARA KARSİ. ALMANLAR
 HIÇ TINMADI BİLE.
 YALNIZ BİR SEY YAPTILAR. ATABANINIZIN İTALYAN FARMASON LOCALASINDAKI ÜYELİK BELGESİNİ YAYIN-
 LADILAR. ONDAN SONRA TÜRK BASINI TISS. O KUKREMLEK BALON GİBİ SÖNDÜ.
 ATABANINIZIN DOĞDUGU EVİN ÖNÜNDEN GEÇERKEN BUNLARI DÜŞÜNÜYORDUK, BU ARADA EVİN
 DUVARINDA MERMER BİR LEVHA GÖRDÜK. ÜZERİNDE DÖRT LİSANDA SUNLAR YAZILIYDI.
 "TÜRK MİLLETİNİN MÜCEDDİDİ VE BALKAN İTTİHADİNİN MÜZAHİRİ MUSTAFA KEMAL BU EVDE
 DÜNYAYA GELMİŞTİR".
 BU HATIRA LEVHASINDA YAZILANLAR ÇOK DOGRUDUR.
 ATABANINIZ 1923-TE, OZAMANA KADAR MEVCUT OLMİYAN BİR MİLLET YARATTI.
 1918-E KADAR OSMANLI İDİNİZ. RUM, ERMENİ, ARAP, KÜRT, LAZ, KARISIMI. TÜRK DENİLENLER AZIN-
 LIKTA İDİ.
 VE 1923 BİRDEN TÜRKİYE OLUVERDİNİZ.
 NASIL MI ? GÖRÜNMEZ KUVVETLER SAYESİNDE.
 GÖRÜNMEZ KUVVETLER ATABANINIZI YARDIM ETTİLER.
 1918-DE OSMANLI İMPARATORLUGU YIKILMISTI. HER SEYİ KAYBETMİŞTİNİZ. FAKAT BİR KAÇ SENE
 SONRA DIRİLDİNİZ.
 VE ANATOLYAYI YENİDEN ELE GEÇİRDİNİZ.
 YASAĞIN MUSTAFA KEMAL, FAKAT BİLHASSA YASASIN :
 GÖRÜNMEZ KUVVETLER.
 (DEVAM EDECEK)

Յ. Չ.

ՈՒՐՏԱԳՆԱԾՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ՅՈՒՆԱՍՏԱՆ... (Ծար. էջ 2-էն)

մէկ ցուցանակին վրայ, նշուած էր բերդին ուղղութիւնը, յունարէնով՝ և անգլերէնով՝ "HEROS TOMB" [Հերոսներուն Գերեզմանը]:

Եւ նախկին բերդը վերածուած էր մեծ Պարտէզ-Պանթէոնի մը:

Պանթէոնին մուտքին մօտ, ուրիշ պարտէզի մը մէջ, զետեղուած էր Լորտ Պայրըն-ի մէկ մեծ արձանը՝ Յունական հերոսի համագգեստով:

Պանթէոնին մուտքը զարդարուած էր Յունական և Անգլիական դրօշներով՝ ի պատիւ Լորտ Պայրըն-ի:

Եւ ճիշդ Պարտէզ-Պանթէոնին կեդրոնը, կայ բլրակաձեւ դամբարան մը, վրան մեծ խաչով, իբր անծանօթ զինուորի Յուշարձան, որուն ներքեւ ամփոփուած են բերդին հերոս պաշտպաններուն մասունքները:



Պանթէոնի կողքին զետեղուած վառօդի տակառները

Այս դամբարանին մէջ զետեղուած է նաև «Սիրտը» Լորտ Պայրըն-ի, որ Միսուլոնկի եկած էր հոգիով և սիրտով [նոյնիսկ՝ զէնքով] պայքարելու համար թուրքերուն դէմ, Յոյն հերոսներուն կողքին:

Կեդրոնական մուտքին ճիշդ դիմացը կ'երեւար Պայրընի մարմարե արձանը, երկու կողմը զարդարուած յունական և անգլիական դրօշակներով:

Պանթէոնին կեդրոնը գտնուող Անծանօթ զինուորի դամբարանին շուրջ զետեղուած էին բերդին հերոս պաշտպան ղեկավարներուն կիսանդրիները:

Եւ անծանօթ զինուորի Յուշարձանին աջ կողմը, Մեսուլոնկի բերդաքաղաքին պաշտպանութեան հրամանատար Մարքոս Պոթզարիսին դամբարանը կը տեսնուէր:

Եւ այս դամբարանին վրայ զետեղուած էր Ֆրանսացի ծանօթ արձանագործ DAVID D'ANGERS-ին "L'ENFANT GREQUE", "KORITIS ELLANDOS" «Յոյն Երեխան» անունը կրող մարմարե ստեղծագործութիւնը, որ 1827-ին կերտուած է:

Շատ տպաւորիչ էր այս Միսուլոնկիի հերոսներուն Պանթէոնը իր յուշարձաններով:

Բայց մեզի համար, այս Պանթէոնին ամենէն շատ տպաւորող մասը, Բերդի հրամանատար Մարքոս Պոթզարիսին դամբարանին ճիշդ կողքին զետեղուած վառօդի տակառներն էին:

Յուզումով և հիացումով դիտեցինք այս վառօդի տակառները:

Միսուլոնկի-ի բերդին վերջին հերոս պաշտպանները, վառօդարանը պայթեցնելով, բոլորն ալ նահատակուած էին:

Բայց, իրենց հետ միասին, փլատակներուն տակ թաղած էին, ներխուժող թուրք բարբարոսները:

Երանի՛ այն ազգի զաւակներուն որոնք, իրենց հայրենիքը պաշտպանելու համար, կը պայքարին և հերոսաբար կը նահատակուին:

[Ծարունակելի]

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԼԱՄԱՐ

Ե Փ Ր Ա Տ Ի Ն Ա Ի Ա Լ Ա Ն Գ Ի Ս Տ Ը ...

ՎԱԶԳԷՆ ԹԻԻԹԻՆՅԵԱՆ

2002, Ապրիլի 23. Կես գիշերը անց մեր Տոճ-ը, բռնորոտ և սուրբ դէպի Լա-
լէպ: Աղջամուղջին, շրջանցելով անապատի օրհնեալ ովասիսը, նոյն ընթացքով շարու-
նակեց իր վագրը, կտրեց անցաւ ուղտորուն յամբընթաց կարաւանները ու հորիզոնին
վրայ կիսով բռնկած արեւը կանխելով, կանգ առինք Տէր Զօրի տիրապետական կամուր-
ջին կից գտնուող Եղուալի սրճարան-ճաշարանին առջեւ:

Մեր երկրորդ և վերջին արշաւը սկսաւ Տուրա-Էրոտոս երթուղիին առաջին ֆա-
ռանկեան վրայ: Զօպան Լասո մեզի կը սպասէր: Իճիսունը անցած այս բեքեւաշարժ
հօտաղը մեզ առաջնորդեց այն ֆարանձաւը, որ «Պայ էլ Ելեհէնէմ»... «Վատի էլ Ել-
եհէնէմ»... կը կոչէր և դարեր առաջ եղած էր Եփրատի նաւահանգիստը...: Երբ ֆա-
րանձալի վրայ ցոյց տուաւ հայերէն արձանագրու-
թիւնները յիշեցի, որ 1967-
ին եկած էի հոս և լուսանը-
կարած արձանագրութիւն-
ները, որոնք թժ. Ռ. Ճէպէ-
եանի միջոցով Երեւան
դրկելով ստուգած էինք, թէ
այդ վայրը ժէ դարուն
եղած էր նաւահանգիստ...:
Եփրատ, իր հունը փոխե-
լով, վայրը վերածուած էր
անապատի, իսկ Եղուալի
օրերուն, նահատակ հայ
պատանիներուն ու կոյսե-
րուն կացինահարման շտե-
մարանը...:



Զօպանը ուրեքուս ջու-
խա կ'անցընէ և երկար գօ-
տի մը կը կապէ մէջքիս: Զորաբերանը ցած է. սա-
կայն սխալ ֆայլ մը կրնայ
վտանգաւոր դառնալ: Ար-
դէն լայնաբերան ֆարայրին
առջեւ եմք:

Տէր Զօրի, Ջէնոպիայի, Տուրա Էրոտոսի երթուղիին
աջին՝ լեռնաշղթային ստորոտը կը գտնուի Եփրատ գետի
նախկին նաւամատոյցը: Անոր ժայռերուն վրայ ցարդ կը
գտնուի հայերէն արձանագրութիւնը. լուսանկարուած
1967-ին և կարդացուած:

Եղուալի արհաւիրքի օրերուն թուրք ռերագործները
խողխողած և կացինահարած են հազարաւոր պատանի-
ներ և նետած հսկայ ֆարանձաւին մէջ... Անապատի հօ-
տաղները վայրը կոչած են «Պայ էլ Ելեհէնէմ»... Վատի
Ելեհէնէմ...»:

Բազմաձայն ու մնայուն
աւուրց մը, աղաչական հեւ-
նով կը փշաֆաղէ մարմինս:
Տակաւ կը նշարեմ կացի-
նահար կմախֆներ, փշտուած
ուկորոտիք, գանկե՛ր, գան-
կե՛ր ու հարիւրաւոր սեւ ու
մուր արջեր, պտնմ ապշած,
զարմացած, ինձմէ քննուած ու վշտահար,
անակնկալի եկած ինձի կը նային... աղա-
չական կ'արեւան... հոգիս կը ճանկոտեն. գիտեն որ
ես գիրենք փրկելու եկած եմ...: Դէպի
ներս, քանի մը ֆայլ կ'առնեմ և հիացիկ կը
ֆարանամ... ղիմացս զլուխ-գործոց
ֆանդակ մը՝ խօսուն ու կեանքով աւլցուն...
Քարմատի մայրը կացինահար բռնը եր-
կարած է ծծկեր մանուկին որ կարիկ պա-
հանջելու անհանդարտ շարժումներու մէջ,
շորիկներու հիւսկէ տոպրակը բացած է և
դուրս բափած ֆայլփող մեծ ու փոքր դրու-
շաններ...:

Գտնուած դրուշանները կը պատկանին մանուկի մը,
որուն շորիկին մէջէն բափած են անոնք և մայրը՝ սար-
սափած ինկած է գաւկի վրայ և ծածկած գանձերը...

Ուրաւնօրը տարիներ վերջ, ստուած ու չորցած մորթը
կը պահէ կոտորածին ահաւոր ողբերգութիւնը...

- Դէպի Մարֆա Էտ'տէմ (արիւնի նաւահանգիստ) մեզ
առաջնորդեց 90-ամեայ «չօպան» Լասոն Ազար...:
23-24/4/2002 Տէր Զօր

Գանձը ծածկելու փութկոտութեամբ եղե-
րաբարդ հայուհին ծունկի եկած է որ հոգե-
հատորը նոր հարուածի մը գոհը չերթայ...
Ուրաւնօրը տարիներ է վեր յուշարձանը
կանգուն մնացած է շնորհիւ անթացուսի
դեր կատարած ժայռաքելորիին...:
Կորոշեմ հետս տանիլ անսգիւտ ֆանդակը,
սակայն ներքին ձայնին առջեւ կանգ կ'առ-
նեմ...:
- Գէտք չէ խանգարել անոնց յախտնական
նիւջը... հոն՝ ուր անոնք վերջին անգամ գի-
րար տեսան... հոն՝ ուր անոնք վերջին շուն-
ըլ փնջին...:
Մունկի կու գամ, խորագրած կը համբու-
րեմ մատուցները ու խոնաւ աւազներէն կը
հաւաքեմ քանի մը խարմեաներ ու, սրտիս
վրայ սեղմած, ոտի կը կանգնիմ...:



Կարապատ լատանաւ

Լասոն ու ես կ'արտասուէինք...:

ՈՒՒՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ
ՅՈՒՆԱՍՏԱՆ

PYLOS-ի (ԿԱՄ՝ NAVARIN) ՆԱԻԱՀԱՆԳԻՍԵԸ,
ՈՐ 20 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1827-ԻՆ ԹՐԶԱԿԱՆ
ՆԱԻԱՏՈՐՄԻՆ ԳԵՐԵԶՄԱՆԸ ԵՂԱԻ:

1.- 17-ՐԴ ԴԱՐԷՆ Ի ՎԵՐ, ՕՍՄԱՆԵԱՆ ԿՈՂՈ-
ՊՈՒՏԻ ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆԸ ՓԼՅՆԵԼ ԱԾԽԱՏՈՂ
ՌՈՒՍԱՍՏԱՆԸ...

2.- ԵՒ ՕՍՄԱՆԵԱՆ ԴԱՀԻՃՆԵՐՈՒ ԿԱՅՍՐՈՒ-
ԹԻՒՆԸ ՄԻՆՉԵՒ ԱՅՍՕՐ ՊԱԾՏՊԱՆՈՂ ԱՆԳ-
ԼԻԱՆ ԵՒ ԻՐ ՀԵՏԵԻՈՐԴՆԵՐԸ...

3.- ... ԵՒ ԱՐԵԻԻ ԼՈՅՄԻՆ ՉԱՓ ՅՍՏԱԿ ԵՂՈՂ
ԱՅՍ ԻՐԱԴԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՉՏԵՍՆՈՂ ՄԵՐ
«ԿՈՅՐ» ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԸ, ՈՐՈՆՅ ՏԳԻՏՈՒԹԵԱՆ
ԶՈՂԸ ԵՂԱԻ ՀԱՅ ԱԶԳԸ:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ
(ՎՐԷԺ ՌՈՒԲԷՆԵԱՆ)



PYLOS - ցեղ և երկար կղզի մը, բնական ու անխոցելի նաւահանգիստի վերածած է սա ծովախորշը, ուր ապաստանած էին թրքական և եգիպտական նաւատորմները, որոնք սակայն խորտակուեցան ռուսական, ֆրանսական և անգլիական ուժերուն կողմէ:

3) Կը կարծենք, թէ մարդկային ամենէն սքանչելի յատկանիշներէն մէկը՝ իրականութիւնները տեսնելու, բարին և չարը ճանչնալու և իրարմէ զանազանել գիտնալու կարողութիւնն է:

Դժբախտաբար պիտի ըսենք, որ Հայ Ազգին մօտ, վերջին դարերուն, պակասած են այս կարողութիւնները:

Ան, ընդհանրապէս, չկրցաւ տեսնել իրականութիւնները: Հայ Ազգը, մեծ մասամբ, չկրցաւ զանազանել՝ 1.- Իրեն համար օգտակար եղող,

2.- Եւ կամ իրեն համար վնասակար եղող եղելութիւնները:

Ռուսաստանը, 17-րդ դարէն ի վեր, մանաւանդ Մեծն Պետրոս կայսրէն սկսեալ, տեսաբար աշխատեցաւ որ կործանէ Օսմանեան ըսուած բարբարոսներու կայսրութիւնը և տիեզերական Ուղղափառ եկեղեցիի կեդրոն եղող Պոլիսը ազատագրել վայրենիներու ձեռքէն:

18-րդ դարուն, Ռուսիոյ թագուհին՝ Մեծն Կատարինէ Բ.ը, Օսմանեան Կայսրութեան դէմ ամենաբուռն պայքարը տանող իշխանաւորը եղած է:

Ասոր երկաթեայ կամքին շնորհիւ է, որ Օսմանեան Կայսրութիւնը «Հիւանդ մարդ»ի վերածուեցաւ և կործանման սեմին հասաւ:

Անոր իշխանութեան տարիներուն է, որ Յուճաստանի մէջ, Յոյն ազատագրական շարժումը սկսաւ:

1770-ին Մեծն Կատարինէին անձնակազմին մաս կազմող Օրլոֆ եղբայրներու ղեկավարութեամբ, Ռուսական ճաւատորմ մը հարաւային Փելոփոնէս կը հասնի և կը պաշարէ Օսմանեան գրաւման տակ եղող Գորոն-ի բերդը:

Եւ Ռուս Օրլոֆ եղբայրները Յոյն ժողովուրդին կը թելադրեն ըսելով, որ «Այլեւս հասած է ազատութեան օրը և պէտք է պայքարիլ բարբարոս Օսմանցիներուն դէմ»:

Օրլոֆ եղբայրներն էին որ տուին առաջին ազդանշանը, Յունական անկախութեան պայքարին:

Յունական Ուղղափառ եկեղեցին շատ մեծ դեր կատարած է Յոյն ազգային ոգի-ն և Յունական աւանդութիւնները պահպանելու աշխատանքներուն մէջ:

Մանաւանդ 18-րդ դարուն, եղբայր Ռուսական Ուղղափառ եկեղեցիին ազդեցութեամբ, Յունական եկեղեցին մղեց Յոյն ժողովուրդը դէպի Յունական ազգային ոգիի զարթօնք:

Յոյն եկեղեցին Օսմանեան գրաւման տակ գտնուող Յունաստանի աղօթատուններուն մէջ ստեղծեց «գաղտնի դպրոցներ», որոնց մէջ Յոյն երիտասարդները կը դաստիարակուէին ազգայնական գաղափարներով:

1800-թ.ներէն սկսեալ, Յունական եկեղեցիին ազդեցութեամբ կը կազմուին գաղտնի ընկերակցութիւններ (Hetairies), որոնց նպատակն էր՝ «Պայքար՝ դէպի ազատութիւն»:

Այս գաղտնի ընկերակցութիւններուն ամենէն կարեւորն է «Filiki Eteria»ն (Բարեկամական Ընկերակցութիւն), 1814-ին կազմուած, Օտեսայի մէջ, Պոլսեցի Յոյն "Phanariodes"ներէն՝ Alexandre Ypsilanti"ի կողմէ, որ Ռուսիոյ ծարին պատերազմական օգնակա-նը եղած է, զօրավարի աստիճանով:

A. Ypsilanti-ն է յունական յեղափոխութեան ռահվիրան և կազմակերպիչը: Եւ Յունաստանը իրեն կը պարտի իր անկախութիւնը:

Եւ ինչպէս որ «ՆԱՅԻՐԻ»-ի թիւ 172-ին մէջ գրած էինք՝ 25 Մարտ 1821-ին, Patras-ի Մերթրոլիթը՝ ժերմանօս Յունական անկախութեան դրօշակը կը վերցնէ և կ'արձակէ Յեղափոխութեան կարգախօսը՝ «ՀԱԻԱՏԶ, ԱԶԱՏՈՒԹԻՒՆ, ՀԱՅՐԵՆԻԷ»:

Եւ 1822-ին Epidaur-ի մէջ, Յունաստանի անկախութիւնը կը հռչակուի:

Եւ 1827-ին, յունական Ազգային ժողովին կողմէ, Յունաստանի պետութեան առաջին նախագահը կ'ընտրուի, ծնունդով Corfou-ցի, յետոյ Ռուսիա երթալով հոն ուսանած և մինչեւ Ռուսիոյ արտաքին գործերու նախարարութեան աստիճանին հասած COMTE DE CAPO D'ISTRIA-ն:

Եւ այստեղ, ուշադրութիւն՝ «Պատմութիւնը կրկնութիւն է»: Յունաստանի նոր պետութեան նախագահ Capo D'Istria, անգլիական իշխանութիւններու կողմէ շատ Ռուսասէր նկատուելով, 1831-ին կը սպաննուի:

Եւ Յունաստանի պետութեան Թագաւոր կը նշանակուի Պաւարիացի հազիւ 18 տարեկան, ծնունդով գերման իշխան մը՝ Ottoni:

1831-ին կատարուած այս ողբերգութիւնը, մէկ օղակը կը կազմէ միայն այն անվերջանալի սպանութիւններուն, որոնց կը դիմէին արեւմտեան պետութիւնները իրենց շահերուն հակառակ եղող ղեկավարները մաքրագործելու համար:

Այս անթիւ, անհամար զոհերուն վերջիններէն նշենք մէկ քանի անուններ միայն՝ J. F. Kennedy, Loutmoumba, Martin Luther King, Salvador Alliende և... Կարէն Տեմիրճեան և Վազգէն Սարգիսեան:

Յունաստանը Օսմանեան Կայսրութեան լուծէն ազատագրելու համար Ռուսերուն տարած աշխատանքներէն, շատ վրդոված էին արեւմտեան պետութիւնները:

Օսմանեան Կայսրութեան ժառանգին միայն Ռուսերուն ձեռքը անցնիլը, իրենց համար մահացու հարուած մը կրնար ըլլալ:

Այդ սլաւոնառաւ, Եւրոպայի մէջ, շղթայազերծեցին Phill Hellenes (Յունասէր) շարժումը:

Մենք կը հաւատանք, որ այս շարժումը, իրականութեան մէջ, քաղաքական նպատակներով հիմնուած էր, Ռուսերուն հակազդելու համար:

Եւ 1831-ին, Comte Capo D'Istria-ի սպանութիւնն ալ, ասոր մէկ ապացոյցն է:

Յունաստանը Օսմանեան լուծէն ազատագրելու նպատակով Ռուսերուն մղած պայքարին մէջ, 1827-ի Փիլոս-ի (Նավարիմի) ծովային պատերազմը շատ կարեւոր տեղ կը գրաւէ:

20 Հոկտեմբեր 1827-ին, Յունաստանի ծովափը՝ Փիլոս-ի մօտ կը գտնուէր Ռուսական նաւատորմը:

Եւ Ռուսերը առանձին չձգելու համար [իբր թէ որպէս դաշնակից], անոնց միացած էին Անգլիական և Ֆրանսական նաւատորմները:

Այդ օրերուն Յոյները, շատ ծանր պայքար կը տանէին Օսմանցիներուն դէմ:

Եւ Փիլոսի շատ մեծ և ապահով նաւահանգիստը խարսխած էին Օսմանեան նաւատորմը և Օսմանցիներուն օգնութեան համար Փիլոս եկած [եգիպտացի Իպրահիմ Փաշա-յի ղեկավարութեամբ] եգիպտական նաւատորմը:

Բայց, այս դաշնակից կոչուած Ռուսական, Անգլիական և Ֆրանսական նաւատորմներուն նպատակները, իրարմէ բոլորովին տարբեր էին:

Ռուսերուն ծրագիրը՝ առիթէն օգտուելով ու միացեալ ուժերով Օսմանեան նաւատորմը խորտակել էր:

Մինչդեռ, միւսներուն՝ մանաւանդ անգլիացիներուն նպատակը, պարզ ազդարար-

← Յոյնական թիւ 173 = 1

րութիւն մը տալ էր Օսմանցիներուն, որ ապըստամբող Յոյներուն հետ զինադադար մը կնքեն: [Այս արեւմտեան պետութիւնները իրենց վարքագիծը բնաւ չեն փոխած: Ամերիկացիները, նոյնիսկ այսօր, հայերուն կ'ստիպեն, որ թուրքերուն հետ բարեկամանան և «Եղածը» մոռնան]:

Բայց Փիլոսի մէջ, պատերազմական դէպքերը ուրիշ ձեւով կ'ընթանան:

Դաշնակիցներուն նաւատորմները կը շրջապատեն Օսմանեան և Եգիպտական նաւատորմիղները: Եւ ինքզինքնին վտանգուած զգացող Օսմանեան նաւերը, ձախաւերօրէն, թնդանօթներով կ'սկսին կրակել:

Եւ Անգլիական նաւատորմն ալ, ստիպուած կ'ըլլայ, պատասխանելու անոնց թնդանօթային զարկերուն:

Եւ Ռուսական, Ֆրանսական և Անգլիական նաւատորմները՝ Փիլոսի նաւահանգիստին մէջ պաշարուած Օսմանական և Եգիպտական նաւատորմները ահռելի պարտութեան կը մատնեն: Ամբողջութեամբ կը խորտակեն օսմանական և Եգիպտական նաւատորմիղներն ու կը բնաջնջեն անոնց մէջ գտնուող 6000- թուրք զինուորները: Թրքական այս պարտութենէն շատ վրդովող Անգլիոյ թագաւորը George IV սապէս կ'արտայայտուի՝ «Ողբալի թիրիմացութիւն մը»... Եւ 1829-ին Ռուսական բանակներուն յառաջխաղացումը դէպի Պոլիս, Օսմանեան Սուլթանին կ'ստիպէ՝ Ռուսերուն հետ, Adrianopolis-ի մէջ, հաշտութիւն ստորագրել և, վերջապէս, ճանչնալ Յունաստանի անկախութիւնը:

* * *

1853-ին Պալքանեան ժողովուրդները՝ Սերպիան և Պուլկարիան Օսմանեան լուծէն ազատագրելու համար, Ռուսական բանակները կրկին կը պատերազմին Օսմանցիներուն դէմ:

Եւ «Մարդասէր» և «Արդարասէր» Անգլիացիները արգելք կ'ըլլան և վերջնագիր կու տան Ռուսերուն, որ վերջ տան Սերպիան և Պուլկարիան ազատագրելու շարժումին:

Եւ այս ձեւով՝ կ'սկսի 1854-1856-ի Խրիմի պատերազմը:

Եւ Անգլիացիներն ու իրենց հետ «Ազատատենչ» Ֆրանսացիները և Իտալացիները, իրենց զինա-

կից հռչակելով թուրքերը, կը յարձակին Ռուսիոյ վրայ:

Եւ Ռուսիա պատերազմը կը կորսնցնէ և հաշտութիւն կը կնքէ այս, իբր թէ «Զրիստոնեայ և արդար» պետութիւններուն հետ 1856-ին, Փարիզի մէջ:

Բայց 1876-ին Ռուսերը կրկին կը յարձակին Օսմանցիներուն վրայ և կ'ազատագրեն Սերպիան և Պուլկարիան՝ Արեւմուտքի մէջ, և Ռուսական բանակները Պոլսոյ դռները կը հասնին: Արեւելքի մէջ ալ, Ռուսական բանակները Արեւմտեան Հայաստանին մէկ մասը կ'ազատագրեն:

Այս անգամ կրկին կը միջամտեն Անգլիացիները և կ'ստիպեն Ռուսերուն, որ քաշուին Պոլսոյ դռներէն և Արեւմտեան Հայաստանէն:

Բայց, Ռուսական 1876-ի արշաւանքով, վերջապէս ազատագրուած կ'ըլլան բոլոր Պալքանեան ժողովուրդները (բացի Արեւմտեան Հայաստանէն):

Այդ թուականէն յետոյ կառուցուած բոլոր Ռուսական եկեղեցիներուն զմբեթներուն վրայ՝ իբր Ռուսական բանակներուն կողմէ թուրքերուն դէմ տարուած յաղթանակի խորհրդանիշ՝ կը դրուին մեծ խաչեր:

Եւ այս խաչերուն տակ՝ թրջական մահիկներ, որ քրիստոնեայ ժողովուրդները զանոնք տեսնեն և չմոռնան թրջական բարբարոսութիւնները: Բայց... «կուրացած» հայ առաջնորդներուն մեծամասնութիւնը, չտեսնան խաչերուն տակ ճգնուող թրջական մահիկները...:



Ռուսական խաչերուն տակ խոցուած մահիկները

Վկայ են 1876-ին.

Վարժապետեան Պատրիարքի առաջնորդութեամբ, Սուլթանին հաւատարմութիւն երդող Պոլսահայերը, վկայ՝ 1908-ին թուրքերուն հաւատացող Դաշնակցականները. վկայ՝ 1918-էն մինչեւ 1990 Սովետներուն թշնամացած նոյն կուսակցութիւնը:

Եւ վկայ՝ այսօրուան դաշնակցականամէտ Հայաստանի իշխանութիւնը:

21 Մայիս 2002-ին, Մետլոնկի-ի հերոսներուն Պանթէոնը այցելելէ ետք, ուզեցինք տեսնել Ռուսական, Ֆրանսական և Անգլիական նաւատորմներուն Օսմանեան և Եգիպտական նաւատորմներուն դէմ տարած յաղթանակի վայրը:

Եւ 22 Մայիս 2002-ին, Patras-էն ինքնաշարժով ճամբայ ելանք դէպի Pylos:

Փելոփոնէս-ի Ժայրագոյն հարաւը (Փաթրաս-էն 200 քմ. դէպի հարաւ) գտնուող Փիլոս քաղաքը տանող ճամբան, շատ հաճելի էր՝ կանանչապատ և անտառ. մանաւանդ՝ անվերջ ձիթենիներ:

Փիլոս-ի մերձակայ ճամբան շատ լեռնային էր. և դարձուածքները մէկը միւսին կը յաջորդէին:

3 ժամուան ճամբորդութենէ մը յետոյ, վերջապէս Փիլոս հասանք: Պզտիկ քաղաք մըն էր Pylos, բայց մեծ նաւահանգիստով քաղաք մը:

Իր նաւահանգիստի հանգամանքը կու գար՝ Փիլոսէն 3 քմ. հեռաւորութեան վրայ գտնուող, 5 քմ. երկարութեամբ կղզիէ մը, որ Փիլոսի ծովը երկու կողմերէն նեղուցներով գոցած և զայն շատ բնական ու մեծ նաւահանգիստի վերածած է:

Այս պատճառաւ էր, որ Օսմանեան և Եգիպտական նաւատորմները ինքզինքնին ապահով կը զգային Փիլոսի նաւահանգիստին մէջ, եւ վստահելով իրենց մեծ թիւով թնդանօթներուն կրակի ուժին, խարսխած էին հոն, առանց մտահոգուելու:

Բայց Ռուսական, Ֆրանսական և Անգլիական նաւատորմները ձեւով մը (Ծարդ՝ էջ 3)

8-6-2002

ԿԸ ՆՐԱՊԱՐԱԿԵՆՔ ԹՈՒՐՔԵՐՈՒՆ [ԻՐՐ ԹԷ] ՉԳԻՏՅԱԾ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ՍԵԼԱՆԻԿԻ ՄԷՋ ՍԿՍՈՂ ԵՒ ԹՈՒՐՔ, ՆԱՅ ԵՒ ՅՈՅՆ ԱԶԳԵՐՈՒՆ ՃԱԿԱՏԱԳԻՐՆԵՐԸ
ՓՈՒՈՂ ԵՐԵՔ ԿԱՐԵՒՈՐ ԴԷՊՔԵՐ

ԱՌԱՋԻՆ ԴԷՊՔ.—

ՄՈՒՍԹԱՖԱ ՔԵՄԱԼԻՆ ՍԵԼԱՆԻԿԻ ՄԷՋ ԾՆՈՒՆԴԸ

Սելանիկի մէջ, Մուսթաֆա Քեմալին ծնած տան պատին մարմարեայ արձանագրութեան վրայ գրուածին համեմատ՝ «Մուսթաֆա Քեմալ, 1923-ին, թուրք ազգը ստեղծեց»:

Մուսթաֆա Քեմալին այս աստուածային, ստեղծելու կարողութեան մասին՝ 1933-ի տասնամեակի քայլերգին մէջ ալ կը տեսնենք. «Տասը տարուան մէջ, 15 միլիոն երիտասարդ ստեղծեցինք՝ ամէն տարիքէ»։ Այսինքն, Մուսթաֆա Քեմալը գերբնական կարողութիւններ ունեցող ա՞նձ մըն էր: “No comment”: Անցնինք:

Մուսթաֆա Քեմալին կենսագրութեան մասին գիրքերու մէջ ի՞նչ գրուած ըլլալը հասկնալ ուզեցինք, և նախ նայեցանք 1969-ին հրատարակուած «Դպրոցի հանրագիտարան»ին մէջ:

Այս հանրագիտարանին մէջ, Մուսթաֆա Քեմալին մեռած թուականը [10 Նոյեմբեր 1938], օր, ամիս, տարի ըլլալով կայ. բայց ծննդեան թուական որպէս միայն 1881 գրուած է. իսկ օրը և ամիսը չկայ. ինչո՞ւ. Մուսթաֆա Քեմալ շատ դարեր առաջ ապրած անձ մը չէ: Եղածը ընդամէնը 120 տարի է:

Այդ թուականին պատահած ամէն բան՝ բոլորին ծանօթ եղող մօտ թուական մըն է:

Ասկէ զատ, դպրոցի հանրագիտարանին մէջ, Մուսթաֆա Քեմալին մօրը անունը «Ջիւպէյտէ» ըլլալով գրուած է. բայց իր հօրը անունը չկայ. ինչո՞ւ: Շատ տարօրինակ է: Իր ծնած տունը յայտնի է, բայց հօրը անունը չկայ:

Եկուր և չար լեզուներուն ըսած սուտ և սխալ բամբասանքներուն մասին մի մտածեր:

Այս պատճառաւ մեր փնտոտութիւնը խորացուցինք և գերմանական “DER GROSSE BROCKHAUS” մեծ հանրագիտարանին մէջ, Մուսթաֆա Քեմալին մասին գրուածները կարդացինք:

Ջարմանալի է, այս հանրագիտարանին մէջ ալ, Մուսթաֆա Քեմալին ծննդեան թուականը 1880 գրուած էր և քովն ալ՝ հարցական նշան մը դրուած. ինչո՞ւ:

Այսքան ծանօթ անձնաւորութիւն մը, որուն գերբնական կարողութիւններ կը վերագրուի և իր ծնած տունը թանգարանի վերածուած է, ծննդեան թուականին չգիտցուիլը՝ գերբնական դէպք մըն է:

Բայց, մեզի համար ամէնէն կարեւորը՝ Մուսթաֆա Քեմալին կենսագրութեան մէջ գրուած սա տողերն են.

«Մուսթաֆա Քեմալը՝ Էնվէր փաշային գաղափարակից ընկերը ըլլալով, մասնակցեցաւ՝ 1908-1909 «Երիտասարդ թուրքերուն» յեղափոխութեան»:

Այս ըսել է, որ Մուսթաֆա Քեմալը Սելանիկի մէջ, դաւանափոխներուն և ոչ-դաւանափոխներուն հիմնած “ITTIHAT VE TERAKKI” կուսակցութեան անդամ էր:

Մինչդեռ, դպրոցներուն մէջ մեր կարդացածին համեմատ՝ Մուսթաֆա Քեմալը իր ծառերուն մէջ “ITTIHAT VE TERAKKI” կուսակցութիւնը գետնէ գետին զարկած էր:

Եւ նաև, “ITTIHAT VE TERAKKI” կուսակցութեան շատ մը առաջնակարգ անձնաւորութիւնները, 1923-էն յետոյ, մահուան դատապարտել տուած էր:

Իրապէս ալ, Մուսթաֆա Քեմալը, գերբնական ուժերու տէր և անհասկնալի անձնաւորութիւն մըն է:

**TÜRKLERİN (SÖZDE) BILMEDİKLERİ GERÇEKLERİ AÇIKLIYORUZ
SELANİKTE BASLIYAN, VE TÜRK, ERMENİ VE YUNAN MİLLETLERİNİN KADER-
LERİNİ DEĞİSTİREN ÜÇ MÜHİM OLAY.**

BİRİNCİ OLAY

MUSTAFA KEMALIN SELANİKTE DOĞUSU

SELANİKTE MUSTAFA KEMALIN DOĞDUGU EVİN DUVARINDA ASILI MERMER LEVHADA YAZILDIGINA GÖRE : "MUSTAFA KEMAL 1923-DE TÜRK MİLLETİNİ YARATTI"

MUSTAFA KEMALIN BU "TANRISAL YARATMA KABİLİYETİNİ" 1933-TE ONUNCU YIL MARSINDA DA GÖRÜRÜZ. "ON YILDA ONBESMİLYON GENÇ YARATTIK, HER YASTAN".

YANI, MUSTAFA KEMAL, DOĞAL ÜSTÜ KUVVETLERE SAHIP BİR İNSAN MI İDİ ? "NO COMMENT", GEÇELİM. MUSTAFA KEMALIN HAYAT HİKAYESİ İÇİN KİTAPLARDA NE YAZILDIGINI BİLMEK İSTEDİK VE ÖNCE 1969-YILINDA YAYINLANAN "OKUL ANSİKLOPEDİSİNE" BAKTIK.

BU ANSİKLOPEDİDE, MUSTAFA KEMALIN ÖLDÜĞÜ TARİH (10 KASIM 1938) GÜN, AY, SENE OLARAK VAR DA, DOĞDUGU TARİH OLARAK YALNIZ 1881 YAZILMIS.

GÜN VE AY YOK. NİÇİN? MUSTAFA KEMAL UZUN YÜZ YILLAR ÖNCE YASAMIS BİR İNSAN DEĞİL Kİ.

ALT TARAFI 120 SENE EVVEL. HER SEYİN BELLİ OLDUGU YAKIN BİR TARİH.

BUNDAN BASKA, OKUL ANSİKLOPEDİSİNDE MUSTAFA KEMALIN ANNESİNİN İSMİ "ZÜBEYDE" OLARAK VAR DA, BABASININ İSMİ YOK. NİÇİN ?

ÇOK GARİP, DOĞDUGU EV BELLİ, FAKAT BABASININ İSMİ YOK.

GEL DE SOM AGIZLARIN SÖYLEDİKLERİ YALAN YANLIŞ DEDİKODULARI DÜŞÜNME.

BUNUN ÜZERİNE ARAŞTIRMALARIMIZI DERİNLEŞTİRDİK VE ALMANLARIN "DER GROSSE BROCKHAUS" BÜYÜK ANSİKLOPEDİSİNDE MUSTAFA KEMAL İÇİN YAZILANLARI OKUDUK.

HAYRET, BURADA DA MUSTAFA KEMALIN DOĞUM TARİHİ OLARAK 1880 YAZILMIS VE YANINA DA BİR SVAL İSARETİ KONULMUS. NİÇİN ?

BU KADAR MESHUR BİR İNSANIN, KENDİSİNE DOĞAL ÜSTÜ KUVVETLER ATTEDİLEN , VE DOĞDUGU EV, MÜZEYE ÇEVİRİLEN BİR İNSANIN DOĞUM TARİHİNİN BELLİ OLMAMASI, DOĞAL ÜSTÜ BİR OLAY.

FAKAT BİZİM İÇİN EN MÜHİM OLAN, BU ANSİKLOPEDİDE MUSTAFA KEMALIN BIOGRAFİSİNDE YAZILI SU CÜMLE. "MUSTAFA KEMAL, ENVER PASANIN FIKIR ARKADASI OLARAK, 1908-1909-DA JÖN TÜRKLERİN DEVRİMİNE KATILDI".

BU DEMEKDİR Kİ MUSTAFA KEMAL SELANİKTE DÖNMELERİN VE DÖNME OLMİYANLARIN KURDUGU "İTTİHAT VE TERAKKI PARTİSİNİN" ÜYESİ İDİ.

HALBUKİ, BİZİM MEKTEPLERDE OKUDUGUMUZA GÖRE : MUSTAFA KEMAL NUTUKLARINDA "İTTİHAT VE TERAKKI PARTİSİNİ" YERDEN YERE VURMUSTU.

VE İTTİHAT VE TERAKKI PARTİSİNİN, BİR ÇOK İLERİ GELENLERİNİ DE 1923-TEN SONRA İDAM ETTİRMİŞTİ.

HAKİKATEN, MUSTAFA KEMAL DOĞAL ÜSTÜ KUVVETLERE SAHIP VE ANLASILMASI MÜMKÜN OLMİYAN BİR İNSAN.

Յ. Չ.

ՈՒՆՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ՅՈՒՆԱՍՏԱՆ ... (Ծար. էջ 2-էն)

Ծուղակի մէջ ձգեցին այս ապահով կարծուած նաւահանգիստին մէջ անշարժութեան մատնուած Օսմանեան և Եգիպտական նաւատորմները:

Այսօր, այդ պատերազմէն 175-տարիներ ետք, ճակատամարտէն ոչ մէկ հետք կար:

Ծովը հանդարտ էր և կապոյտ: Բայց այդ կապոյտ ջուրերուն տակ կը գտնուէր 6000 Օսմանեան զինուորներուն հաւաքական գերեզմանը...:

Միայն, իբր յիշատակ պատերազմէն, Pylos քաղաքին ճիշդ կեդրոնը, մեծ պարտեզի մը մէջ, կանգնուած է մարմարեայ հոյակապ Յուշարձան մը: Եւ Յուշարձանին ճիշդ կեդրոնը, կանգուն է, կրկին մարմարե շատ բարձր, եռանկիւն ու բրգաձեւ կոթողաճամբան սիւն մը: Ասոր վրայ քանդակուած են



Փիլոսի կոթողը որուն վրայ քանդակուած են երեք յաղթական ծովակալներուն դիմանկարները: Սակայն՝ կոնակ-կոնակի տուած դիրքով: Խորհրդանշելով իրենց պետութիւններուն (Ռուսիա, Ֆրանսա, Անգլիա) հակասական քաղաքականութիւնները անցեալի և... ներկայի: →

Հ. ԲԱՐՍԵՂՅԱՆ N10 177 - 19.1.2002

Փիլոս-Նավարից-ի ծովային պատերազմին Օսմանեան և Եգիպտական նաւատորմներուն դէմ յաղթանակ տարած երեք ծովակալներուն դիմանկարները՝

1.-Ռուս ծովակալ՝ Comte Leningos Heyden (1772-1840). 2.-Ֆրանսացի ծովակալ՝ Henri Daniel Gauthier De Rigny (1782-1835). 3.-Անգլիացի ծովակալ՝ Sir Edouard Cochrington (1770-1851)

Եւ սակայն, տարօրինակ բան մը կար: Երեք ծովակալներուն քանդակները մէկ ակնարկով ու մէկ անկիւնէ դիտելով կարելի չէր տեսնել:

Թէեւ երեք կիսանդրիներն ալ նոյն սիւնին վրայ էին: Բայց՝ կոնակ կոնակի. և նայածքները տարբեր ուղղութիւններու յառած:

Ինչպէս որ են դիրքերը այսօր իրենց պետութիւններուն: Նոյն աշխարհին վրայ կ'ապրին, բայց՝ կոնակ-կոնակի և աչքերը ուրիշ տեղերու սեւեռած:

**ՀԱՄԱՐՁԱԿՈՒԹԵԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՐԺԷՔԸ
ԵՒ ԾԱԾԿԱՄՏՈՒԹԵԱՆ «ԴԻՒԱՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ»Ը
ՊԷՊՕ ՍԻՄՈՆԵԱՆ**



«Ամենքն ուզում են, որ համարակներ
Շատ լինեն կեանքում - սակայն ոչ ինքը,
Ելնեն, ընդվզեն սուտ ու նենգի դէմ,
Կուրծք տան աննկուն - սակայն ոչ ինքը:

Ու դժգոհ էլ է. «Ի՞նչ են երկնչում,
Ինչո՞ւ մինչեւ վերջ չեն նետուիր կռուի
Թէ հարկ է գոհուել, այո, բող գոհուեն
Բայց մնան կանգուն»- սակայն ոչ ինքը:
ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ

Կեանքը կը ծանծաղի, կը ճահճանայ եթէ վերանորոգչական շունչով և բարեկարգչական ոգիով կեանքի բարեբերու ճաղկիչները իրենց համարակուրթիւնը գիշին համակերպողականութեան և յարմարողականութեան տկարութիւններով: Որեւէ բարեւաւում և յառաջդիմութիւն սերտօրէն առնչուած է կառուցողական բնադատութեան հետ, որ անբաղաձախ երեւոյթներու վերացման, յոռի բարեբերու սրբագրումին և կեանքի միապաղաղ ընթացքի տեղաշարժման կը ծառայէ անկեղծօրէ՛ն...: Համարակութիւնը, - իրականութիւնները տեսնելու և ճշմարտութիւնները ըսելու առաջինութեամբ, - հասարակական անկեղծութեան հրապարակային վկայութիւնն է: Հրապարակային վկայութիւն տալու համարակները հետզհետէ կը նուազին և կը փոխարինուին ճնողներով, գովերգուներով, ծածկամիտներով, պատեհապաշտ կեցուածքի տէր անարիններով...: Ուրիշ բարեբեր ալ սկսած են զարգանալ, որոնք կը դրսևորուին ինքնափառաբանքի մտերմական կամ հրապարակային արտայայտութիւններով, նոյնի՛սկ եթէ անոնք կ'արժանանան հանրային կարծիքի արգահատանքին...: Զմոռնանք, որ ծանուցումի աշխարհին մէջ կ'ապրինք և քիչ մը ամէն ոք վարակուած է անոր հեղեղային արշաւէն՝ պատկերասփիւռի թէ այլ տեղեկատուական ցանցերով...: Անոնց խաբարիչ ազդեցութիւններու զոհերն ենք: Հակառակ անոր, որ պժգանքով կը հետեւինք ծանուցումներու ծայրայեղ մատուցումներուն...: Բայց չե՛նք դադրիր ինքնածանուցումի ախտին դարպասել...:

- Դարը այս է, - կ'ըսէր զրուցակից մը, - ուզենք-չուզենք պիտի համակերպինք:

Եթէ ամէն ինչի՛ պիտի համակերպինք, պիտի կորսնցնենք մեր բարոյական արժեքները և գլուխը ցցէ կրաւորականութեան և ծածկամտութեան անբարոյականութիւնը, որ կեանքին սուտն ու նենգը, կեղծն ու անվաւերականը ծածկող այլասերումն է, կեանքը պիտի կորսնցնէ իր քաղցրութիւնը: Ապրելու ոճը պիտի եղծանուի, որ ինքնին արժանապատիւ կեանքի անհետացումն է...: Բարոյական սկզբունքներու տէր համարակներն են, որ իրենց առողջ բնադատութեան սեւեռումներով կը նպաստեն կեանքի մարդկային և ընկերային արժէքներու պահպանման և վերահաստատման: Մեր հայ ընկերութիւնը, - ազգային-եկեղեցական մակարդակներու վրայ, - հետզհետէ կը կորսնցնէ իր լայնախոհութիւնը համարակ խօսքերը, սրտցաւ մատնանշումները լսելու և ընդունելու: Հայրենիքը սիրել չի նշանակեր անոր իրականութիւնը գունազարդել, սեւը սպիտակ գոյնով ներկայացնել: Մեր խօսքը չի վերաբերիր անոնց, որ սպիտակն ալ կ'անտեսեն և միայն սեւը կը շեշտեն...: Հայրենիքը հաշիւով և այլ նկատումներով կեղծ սիրողներէ աւելի անկեղծ ու սրտաց բնադատներու պէտք ունի, իր ճիշդ ուղին գտնելու, կերտումի հուսին մէջ մտնելու և իր ապահով ապագան ծրագրելու համար: Զշմարիտ հայրենասէրները անո՛նք են, որոնք հայրենիքին վէրջը տեսնելով և ճանչնալով, անոր ախտաճանաչումը կը կատարեն, կը տառապին անոր

ցաւին այրուածքներով և կը փնտոեն ելք մը՝ ի խնդիր լոյսի և յոյսի յայտնաբերման...: Նոյնն են ազգային կառոյցներն ու եկեղեցին: Ազգային մշակոյթն ու գրականութիւնը: Ազգին յառաջդիմութիւնը ցանկացողը, անոնք չեն միայն, որոնք հանգամանքներու բերումով, ամէն ինչ պայծառ կը տեսնեն ու անտարբեր են իրենց շուրջ վիտացող մոլորանքներու, սխալ կարգադրութիւններու և միակողմանի մօտեցումներու նկատմամբ, որոնք ազգավնաս են իրենց հետեւանքներով...: Բոլորովին մոռցուած է ազգային կեանքին բերիները և գործող վարչամեքենային վրիպանքները հանրային կարծիքին պարզող և անոր սեփականութիւնը դարձնող ողջմիտ վերաբերումը: Այդ վերաբերումին հեղինակները, որոնք համարձակութեան բարոյականութիւնը մարմնացնողներն են, «գէշ» մարդ կը դառնան...: Գէշ մարդ դառնալէ խուսափողներով շրջապատուած է մեր ընկերութիւնը: Գէշ մարդ դառնալ կը նշանակէ հեռու պահուիլ ազգային կառոյցներէ և մեկուսացուիլ...: Եկեղեցին նոյն դրութեան մէջ է: Անոր միութիւնը ցանկացողները, հայ եկեղեցւոյ միասնականութեան շատագովները, որուն իրականացման մէջ կը տեսնեն Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ մէկութիւնն ու հզօրացումը, անբաղձալի կը համարուին...: Կը մերժուի՛ն...: Հատուածականութիւնն ու քաժանումը քաջալերողները ի պատուի կը դառնան...: Եկեղեցին ազգային ընդհանրականութեան կառոյցն է և հոգեւոր և աշխարհական իշխանութիւններուն քաղաքականութիւնը պիտի ըլլայ ապահովել անոր ամբողջականութիւնը, վերջ տալով տարանջատումի ամէն երեւոյթի...:

Ազգային մշակոյթի և գրականութեան զարգացման ուղղութիւնները պէտք չէ առաջնորդուիլ ինքնաբաւութեան սահմանափակումով և իրագործուածը կատարեալ տեսնելու նեղ հորիզոնով...: Յաճախ խեղճութիւններն ու միջակութիւնները խարազանողները, որոնք ազգային մշակոյթին պաշտամունքը ունեցած են իրենց հոգիներուն մէջ, — Յակոբ Օշականի օրինակով, — հալածուած են...: Այսօր ոչ ոք կը համարձակի մեր լեզուին խաչելութիւնը՝ առօրեական մամուլին մէջ՝ նշուակի առարկայ դարձնելու, կամ գրական տաճարին սրբապղծութիւնները մաքրագործելու...: Հաշիւներու ընկերութիւն է հայ կեանքը: Մարդիկ ու կառոյցներ կը գործեն հաշիւներով և հաշուենկատութեամբ, որուն քաղաքականութիւն պիտակը փակցուցած են...: Պարկեշտ, համարձակ ու քաջ խօսքի պակասը զգալի է:

Հայ կեանքի բարեբերու, մոլութիւններու և մոլորութիւններու երգիծաբան ձողկիչը՝ Յակոբ Պարոնեանը իր ժամանակին, ազգային ու եկեղեցական ջոջերու ծանրաշուք ներկայութիւնը առա՛նց հաշուի առնելու, չէ խնայած իր սուր քննադատութիւնները և խայթող երգիծանքը, յանձնառու ըլլալով «Գէշ» մարդ ըլլալու փշէ պակին: Իր ժամանակին ալ, հիմա ալ «Ի՛նչ լաւ ըսած ու գրած է» Յակոբ Պարոնեանը ըսելով անոր ետին պահուրտողներ չեն պակասած: Ճշմարտութեան համարձակախօս ախոյեանը արդէն գէշ մարդ եղած է, խղճին բելադրութեամբ կուրծք տալով աննկուն և աներկիւղ կեցուածքով: Ի՛նչ լաւ է, որ իրենց ըսելիքը ան ըսած է խիզախօրէն, — և ոչ իրենք, — որ չունին քաղաքական արիութիւնը նման կեցուածքներու

ՈՒՆՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ
ՅՈՒՆԱՍՏԱՆ
PELOPONESE-Ի OLYMPIA ՍՐԲԱՎԱՅՐԸ
ՈՒՐ, ԱՍԿԷ 2800 ՏԱՐԻՆԵՐ ԱՌԱՋ,
ՍԿՍԱՆ ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԻԼԻՆԿԻՐԵԱՆ
(ԿՐԷԺ ՌՈՒԲԷՆԵԱՆ)



Օլիմփիայէն զանազան տեսարաններ

Հայոց Պատմութեան տեղեակ եղողներուն համար անհերքելի իրականութիւն մըն է, որ հայ մշակոյթին և հայկական կրօնին արմատները կապուած են, մեծ մասամբ, Յունական դասական մշակոյթին և Յունական կրօնին:

Մեր նախնիները խոր իմաստութիւնը ունեցած են օգտուելու, դաստիարակուելու և հմտանալու բոլոր մարզերու մէջ՝ Յունական քաղաքակրթութեան:

Մանաւանդ՝ Մեծն Աղեքսանդրի դէպի Հնդկաստան արշաւանքներու շրջանին (Ն.Ք. 330 թուականներուն), Հայաստան ենթարկուած է Յունական քաղաքակրթութեան ազդեցութեան:

Այդ շրջանէն յետոյ, հայ թագաւորներուն և արքունիքին պաշտօնական լեզուն Յունարէնը եղած է:

Այդ թուականէն յետոյ, հայ թագաւորներուն կոխել տուած դրամներուն վրայի արձանագրութիւնները, բոլորն ալ, Յունարէն են:

Մեծն Աղեքսանդրով կ'սկսի, Հայաստանի մէջ, Յունական մշակոյթին տարածուիլը: Այդ շրջանին է, որ հայկական արքունիքի մէջ, կը ներկայացուին Յունական դասական թատերախաղեր:

Մանաւանդ հայոց թագաւորներ՝ Արտաշէս Ա.ի, Տիգրան Բ.ի (Մեծ) և Արտաւազդ Բ.ի իշխանութեան օրերուն, շատ անելի կը տեսնուի յունական քաղաքակրթութեան ազդեցութիւնը Հայաստանի մէջ:

Հայոց թագաւոր Արտաշէսն է, Հայաստան բերել տուողը, յունական դիցաբանական աստուածներու արձանները:

Այս ձեւով, հայկական Արամազդը կը նոյնանայ՝ Յունական Զեուսին, Անահիտը՝ Արտեմիսին, Վահագնը՝ Հերակլեսին և Ապոլլոնին, և Աստղիկը՝ Աֆրոդիտին:

Եւ բարեբախտաբար, որ այդպէս եղած է: Եթէ մնայինք Պարսկական ազդեցութեան տակ, ի՞նչ պիտի ըլլար մեր ապագան:

Պարսիկները չկրցան դիմադրել Իսլամական կրօնին ազդեցութեան, և Իսլամացան: Եւ մենք ալ, անխուսափելիօրէն, պիտի իսլամանայինք և կորսուէինք այդ խառնարանին մէջ:

Եւ ի՞նչ տարօրինակ դիպուած է, որ հայ ժողովուրդը պաշտօնապէս Զրիստոնեայ դարձնողը, Պարսիկ մը եղած է: Եւ ան ալ՝ հայերը չարչարող և սպանող Պարսիկ Իշխան Անակի զաւակը, որուն ստնտուն, հայերու վրէժխնդրութեան գինք փրկելու համար, Կապատովկիա կը փախցնէ, ուր Պարսիկ փոքր իշխանը կը մկրտուի Գրիգոր անունով և Զրիստոնեայ կը դառնայ:

Եւ Գրիգորը, Կապատովկիայի մէջ, Յոյն Եպիսկոպոս Փիրմիլիանոսի կողմէ կը կրթուի և կը դաստիարակուի:

Եւ այս Պարսիկ իշխանն է՝ իր նոր անունով Յոյն Զրիստոնեայ Գրիգորը, որ հայ ժողովուրդը, 302 թուականին, պետականօրէն Զրիստոնեայ կը դարձնէ:

Բայց Պարսիկ Գրիգորը, իր արիւնքին մէջ պարսկական վայրագութիւն ունենալուն պատճառաւ է, որ կը քանդէ Հայաստանի տարածքին գտնուող բոլոր յունական մեհեանքները և արձանները:

Մինչդեռ, Յունաստանի մէջ, յունական քաղաքակրթութեան հրաշալիքները, Յոյներուն քրիստոնէութիւնը ընդունելէն յետոյ, չեն քանդուած: Թերեւս, անոնց մէկ մասը, եկեղեցիի վերածուած է:

Եւ այս հրաշալիքները, դիմանալով տարիներուն, բնութեան, և մանաւանդ՝ վայրենիներուն քանդիչ ուժին, մեծ մասամբ հասած են մինչեւ մեր օրերը:

**

302 թ.ին պետականօրէն Զրիստոնէացած հայ ժողովուրդը, 400 թ.ին, քաղաքական պատճառներով, երկուքի բաժնուած էր:

Հայաստանի տարածքին արեւելեան մասը գրաւուած էր Պարսիկներուն կողմէ: Իսկ արեւմտեան մասն ալ՝ Բիւզանդացիներուն:

Եւ Արեւելեան Հայաստանի մէջ պետական լեզուն Պարսկերէնն էր: Իսկ Արեւմտեան Հայաստանի մէջ ալ՝ Յունարէնը:

Արեւմտեան Հայաստանի եկեղեցիներուն մէջ, արարողութիւնները Յունարէն լեզուով կը կատարուէին: Հայ կրօնականներուն լեզուն Յունարէնն էր:

Եւ տարիներու ընթացքին, այս օտար լեզուներուն տիրապետութիւնը անլի պիտի զօրանար և պիտի տարածուէր ժողովրդական խաւերուն մէջ:

Հայ ժողովուրդի բնաջնջման համազօր այս վտանգը բոլորէն առաջ տեսնող և զգացող սուրբերէն մէկն էր՝ Մեսրոպ Մաշտոցը:

Ան, Հայաստանի մէջ, ստացած էր Յունական կրթութիւն: Կը տիրապետէր յունարէնի, պարսկերէնի ասորերէնի և Վրացերէնի:

Իբր ազգասէր հայ, Մեսրոպ Մաշտոց կը կատարէ անտաճանաչունը հայ ազգին սպառնացող վտանգին, որ «Հայ Ազգին հայկական գիր չունենալն էր»:

Անկէ յետոյ, Մեսրոպ Մաշտոցին բոլոր աշխատանքները կը կեդրոնանան «Հայ Գիր» մը ստեղծելուն վրայ: Եւ վերջապէս՝ 405 թ.ին, օգտուելով յունական և ուրիշ այբուբէններէ, կը ստեղծէ հայկական տառերը:

Եւ անկէ ետք, Մեսրոպ կը մեկնի Սամոսատ լայսօրուան Ծամշատ գիւղաքաղաքը, Եփրատ գետին աջ կողմը, Ուրֆայի մօտ) և հոն, յունագէտ Լոովանոսի օգնութեամբ, կը կատարելագործէ հայկական տառերու գծագրութիւնը:

Ապա, Մ. Մաշտոց Պոլիս կը մեկնի և Բիւզանդացի Թէոտոս Բ. Կայսրէն կը ստանայ հայ կրօնականները և հայ աշակերտները հայերէն լեզուով և հայերէն գիրերով դաստիարակելու իրաւունք:

Մենք կը հաւատանք, որ Մեսրոպ Մաշտոցը, հայ Ազգը հայ պահող մեծագոյն «Սուրբ»ն է:

**

Այս տողերով մենք ջանացինք բացատրել, թէ յունական քաղաքակրթութիւնը ո՞ր աստիճան օգտակար եղած է հայկական մշակոյթի զարգացման:

Յոյն և հայկական գործակցութիւնը շատ բախտորոշ եղած է մանաւանդ Հայ Ազգին համար:

Բայց, հայոց և յոյներուն յարաբերութիւնները, 451-ին, Պոլսոյ մէջ կատարուած կրօնական ժողովէն յետոյ, կը խաթարուին: Պոլսոյ նեղուցին Ասիական ափին վրայ գտնուող Զաղկեդոնի մէջ լթքական աղաւաղումով՝ այսօրուան Kadiköy) տեղի ունեցած այս ժողովին տրուած որոշումները, հայ կրօնականները չեն ընդունիր և կը հեռանան ժողովէն:

ԲՅԸ 174 ~ 2-7-2002

Եւ Հայ և Յոյն ժողովուրդներուն միջեւ սկսած այս կրօնական տարակարծութիւնները, ժամանակի ընթացքին, թշնամական վերաբերմունքի կը վերածուին և ատելութեան աստիճանի կը հասնին:

Յոյները մեզ կ'ամբաստանեն, անհրաւօրէն՝ հերետիկոսութեամբ, և ամէն առթիւ մեզ կը ճնշեն և իրենց կրօնական սկզբունքները ընդունիլ կը պարտադրեն:

Եւ յոյներու և հայերու այս թշնամութենէն կ'օգտուին նախ՝ Իսլամները, և յետոյ՝ Հայաստանի

վրայէն Անաթոլիա խուժել սկսած Թաթարական ցեղերը:

Հակառակ այն իրողութեան, որ յունական [Բիւզանդական] բանակներու մէջ մեծ թիւով հայ զինուորներ և զօրավարներ եղած են, ու նաեւ, առաջին դարերէն սկսեալ, Բիւզանդական գահին վրայ անհաւատալիօրէն մեծ թիւով և հայկական ծագումով կայսրեր գտնուած են, այս՝ Յոյներուն և Հայերուն միջեւ եղած թշնամութիւնը չէ

դադրած: Եւ ի վերջոյ յանգած է՝ 1071 թ.ի Մանազկերտի պատերազմական աղետին, ուր Բիւզանդական բանակը պարտուած է իրմէ թիւով տասնապատիկ նուազ Թաթարական ցեղախումբերուն:

Այս պատերազմին հայերը, բիւզանդացիներուն դէմ իրենց ունեցած ատելութեան պատճառաւ, պէտք եղած ձեւով թիկունք չեն կանգնած Բիւզանդական բանակին:

Հայերուն այս սխալ դիրքորոշումը, թէ բիւզանդացիներուն և թէ՛, մանաւանդ, հայերուն համար, մահացու հետեւանքներ ունեցաւ դարեր ամբողջ: Եւ Հայերը և Յոյները, ի վերջոյ, «ամէն բան» կորսնցուցին: Եւ այսօր, Թաթարական այդ ցեղերը, տէր և տիրականը դարձած են աշխարհի քաղաքակրթութեան օրրանը եղող Անաթոլիական հողերուն:

Յոյներու և հայերու միջեւ այս ատելութիւնը այնքան խոր արմատներ նետած է, որ թշնամութիւնը և հակակրանքը թափանցած են ժողովրդական խաւերուն և շարունակած են գոյատեւել երկար դարեր:

Մենք կը յիշենք՝ մեր հայրն և մայրը հա-

կառակ, որ յունարէն գիտէին և կը խօսէին, Սիլիվրի կոչուած յունական գիւղաքաղաքը ապրած ըլլալուն պատճառաւ, երբեմն ատելավառ խօսքեր կ'ընէին յոյներուն հանդէպ և կ'ըսէին, թէ «Յոյները ստախօս են», եւ «Տրճան» կ'որակէին յոյները:

Մինչեւ այսօր չենք կրցած հասկնալ, թէ ո՞ր կէտուգար և ի՞նչ ըսել է՝ «Տրճան» բառը: Արդեօ՞ք «Դրուժան» բառին աղաւաղուած ձեւն է: Չենք գիտեր:

Յոյներն ալ, իրարու հետ խօսած միջոցին, իբր անարգանք՝ մեզ "Houliara" կ'որակէին:

Իհն՝ մեկ քառասունհինգ հարգութեամբ այս քառիկ եմստը: Չամբա՛ս քառասուն:

Սեր մէկ բարեկամին հարցուցինք այս բառին իմաստը: Չանաց բացատրել: «Հուլիարա» շերեփ ըսել է եղեր: Եւ «Յոյները. Բիւզանդիոնի մէջ. հայ առաջնորդներուն շերեփով ու պարտադրաբար կղկղանք կերցուցեր են»:

Անպատկառ և անհրաւ վերագրումներ ու անիմաստ անարգանքներ են յոյներուն և հայերուն իրարու դէմ կատարածը: Եւ այս խօսքերով անոնք. իրարու գերեզմանը փորեցին:

Յոյները և հայերը եթէ տրամաբանութեամբ շարժեին և միացեալ ճակատ կազմէին թաթարական հորդաներուն դէմ. ի՞նչ տարբեր և գեղեցիկ երեւոյթ մը պիտի ունենար աշխարհն այսօր: «Առանց Թուրքի Անաթոլիա» մը երազելն անգամ. ուրախութիւն կը պատճառէ մեզի:

Այս մտածումներով՝ 22 Մայիս 2002-ին. Pylos-էն կը վերադառնայինք և կ'երթայինք Olympia սրբավայրը. ուր Զ. Ա. 776 թուականէն մինչեւ Զ. Ե. 393-թ.ը. ողիմպիական խաղեր կատարուած էին:

Այսօրուան միջազգային ողիմպիական խաղերը. այս պատմական՝ յունական խաղերուն շարունակութիւնն են:

Յունական դիցաբանութեան մեծագոյն «Աստուած»ը եղող Zeus-ի ի պատիւ հիմնուած այս Օլիմպիա սրբավայրը կը գտնուի Peloponese-ի թերակղզիին մէջ. Patras-էն գրեթէ 110 քմ. դէպի հարաւ:

Բայց այստեղ՝ ուշադրութիւն. Olympia սրբավայրը ոչ մէկ կապ ունի Յունաստանի ամենաբարձր լեռը [2917 մետր] եղող Olympos-ի հետ:

Դժբախտաբար Օլիմպիա և Օլիմպոս անուններուն նմանութիւնը շատերուն կարծել կու տայ. թէ Օլիմպիա-ն Ողիմպոս լեռան մօտն է:

Ցաւով պիտի ըսենք. որ 1992-ին Պէլլուրոս հրատարակուած «Հայոց լեզուի նոր բառարանին Բ. հատորին 515 էջին վրայ գրուած է. թէ՛ «Ողիմպիական խաղեր. որոնք տեղի կ'ունենային Ողիմպոս լեռան ստորոտը»:

Մինչդեռ Օլիմպիա սրբավայրը Ողիմպոս լեռնէն նուազագոյնը 500 քմ. մետր դէպի հարաւ՝ Փելոփոնես-ի մէջ է:

Առաջին ողիմպիական խաղերը կատարուած են Զ. Ա. 8-րդ դարուն. Pisa-ի [Փելոփոնես-ի պատմական անունը] թագաւոր՝ Iphitos-ի և Sparta-ի օրէնսդիր Lycurgus-ի կողմէ. Zeus Աստուածը փառաբանելու նպատակաւ:

Բայց. իրականութեան մէջ. բուն նպատակը՝ Միջերկրական ծովուն բոլոր եզերքները տարածուող Յոյն ժողովուրդներուն միջեւ կապը տեսականացնել և յունական ոգին վառ պահելու համար էր:

Չորս տարին անգամ մը կատարուող այս խաղերը. մեծ ժողովրդականութիւն շահեցան: Եւ տարիներու ընթացքին Օլիմպիա սրբավայրը շատ ճոխացաւ և նոր յուշարձաններ և համալիրներ կառուցուեցան այնտեղ:

Կ'ենթադրուի. թէ այս ողիմպիական խաղերուն. 200.000 յոյներ կը մասնակցէին: Կիները մասնակցելու. նոյնիսկ ներկայ ըլլալու իրաւունք չունէին:

Եւ մրցումներուն յաղթական ելլողներուն մեծ պատիւներ

(Շարք՝ ԼՁ 3)



Օլիմպիա-յի թանգարանին մէջ

ԿԸ ՀՐԱՊԱՐԱԿԵՆՔ ԹՈՒՐՔԵՐՈՒՆ [ԻԲՐ ԹԷ] ՉԳԻՏՑԱԾ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ՍԵԼԱՆԻԿԻ ՄԷՋ ՍԿՍՈՂ ԵՒ ԹՈՒՐՔ, ՀԱՅ ԵՒ ՅՈՅՆ ԱԶԳԵՐՈՒՆ ՃԱԿԱՏԱԳԻՐՆԵՐԸ
ՓՈԽՈՂ ԵՐԵՔ ԿԱՐԵՒՈՐ ԴԵՊՔԵՐ

ԵՐԿՐՈՐԴ ԴԵՊՔ.—

«Ի Թ Թ Ի Հ Ա Տ Ե Ի Թ Ե Ր Ա Բ Բ Ի» ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
ՍԵԼԱՆԻԿԻ ՄԷՋ ԿԱԶՄՈՒԻԼԸ»

Արդեօք դիպուած է՝

1.— Թուրք ազգը վերստին ստեղծող Մուսթաֆա Քեմալին Սելանիկցի ըլլալը:

2.— Հայ ազգը 24 Ապրիլ 1915-ին ցեղասպանութեան ենթարկող «Իթթիհատ և Թերաքքի» կուսակցութեան Սելանիկի մէջ հիմնուիլը:

Ասոնց դիպուած է ըսելու համար՝ կոյր, համր և անխելք ըլլալ պէտք է:

Միայն հետեւեալ կացութեան՝ ձեր ուշադրութիւնը կը հրաւիրենք:

1905-երուն Սելանիկի բնակչութեան բաժանումը հետեւեալ ձեւով էր՝

40000 [Քառասուն հազար] Սաֆարիդ չրեայ, 20000 [Քսան հազար] դաւանափոխ չրեայ, 20000 [Քսան հազար] Իսլամ, 40000 [Քառասուն հազար] Յոյն, 3000 [Երեք հազար] Անուշ ջուրի ֆրանսացիներ-Լեւանդեաններ:

Եւ հրեաներուն մեծ մասը իտալապատակ էին և իրենց մէջ շատերը իտալական մասունական օթեակին անդամ էին:

Կարմիր Սուլթան Ապտիլ Համիտ, 1895-ին շղթայազերծած հայկական ջարդերով, անտեսանելի և բարձրագոյն ուժերուն ծրագիրները իրենց տեղը բերած էր:

1908-ին «Իթթիհատ և Թերաքքի» կուսակցութեան բանակը Պոլիս մտաւ և, պարտականութիւնը աւարտած Ապտիլ Համիտը գահընկեց ընելով, կառավարութիւնը ձեռք անցուց:

1914-ին «Իթթիհատ և Թերաքքի» կուսակցութիւնը անտեսանելի և բարձրագոյն ուժերուն մէկ Նոր ծրագիրը կիրարկել սկսաւ:

1914-ին սկսող Առաջին Աշխարհամարտին, Գերմանացիներուն կողքին մասնակցեցաւ և, պատերազմին խառնաշփոթութենէն օգտուելով, 24 Ապրիլ 1915-ին, Ներքին գործոց Նախարար, ճագումով գնչու և ֆարմասոններուն մեծ վարպետը՝ Թալաթ Փաշան՝ Հայ Ազգը ցեղասպանութեան ենթարկել սկսաւ:

Եւ տարիներէ ի վեր շարունակուող հայկական խնդիրը՝ բանի մը ամսուան մէջ, պատմութեան մէջ չտեսնուած վայրագութեամբ լուծեց:

Եւ 19 Մայիս 1919-ին, ծրագրին վերջին մասը կիրարկուիլ սկսաւ:

Մուսթաֆա Քեմալը՝ Սամսոն ելաւ և Նոր և զօրաւոր Թուրքիա մը ստեղծելու աշխատանքներուն սկսաւ: Ժամացոյցի զսպանակի ճշգրտութեամբ կիրարկուող Նոր Թուրքիա մը ստեղծելու ծրագրին արմատներուն Սելանիկի մէջ ըլլալը դիպուած էր արդեօք:

Բացարձակապէս՝ ո՛չ:

1914-էն մինչև 1923 թուականը Անաթոլիոյ մէջ կատարուած դէպքերը՝ անտեսանելի և բարձրագոյն ուժերուն Նոր Աշխարհի մը ստեղծելու ծրագիրներուն մէկ մասն էին միայն:

Եթէ աչք ունիք՝ կը տեսնաք: Եթէ խելք ունիք՝ կը հասկնաք:

Այսօր, Աշխարհի մէջ տեղի ունեցող բոլոր դէպքերը, անտեսանելի բարձրագոյն ուժերուն ծրագիրներուն գործադրութեան հետեւանքներն են:

TÜRKLERİN (SÖZDE) BILMEDİKLERİ GERÇEKLERİ AÇIKLIYORUZ
SELANIKTE BASLIYAN, VE TÜRK, ERMENİ VE YUNAN MİLLETLERİNİN KADER-
LERİNİ DEĞİSTİREN ÜÇ MÜHİM OLAY.

İKİNCİ OLAY

İTTİHAD VE TERAKKİ PARTİSİNİN SELANIKTE KURULMASI

ACABA TESADÜFMÜDÜR

1.- TÜRK MİLLETİNİ YENİDEN YARATAN MUSTAFA KEMALIN SELANIKLI OLMASI.

2.- ERMENİ MİLLETİNİ, 24 NISAN 1915-TE SOYKIRIMINA UGRATAN İTTİHAT VE TERAKKİ PARTİSİNİN SELANIKTE KURULMASI.

BUNLARA, TESADÜFDÜR DEMEK İÇİN, KÖR SAGIR VE AKILSIZ OLMAK LÂZİM.

YALNIZ, SU DURUMA, SİZİN DİKKATİNİZİ ÇEKERİZ.

1905-LERDE SELANIGIN NÜFUS DAGILIMI SÖYLE İDİ.

40000 (KIRKBIN) SAFARİT - YAHUDİ

20000 (YIRMİBİN) DÖNME - YAHUDİ

20000 (YIRMİBİN) MÜSLÜMAN

40000 (KIRKBIN) YUNANLI

3000 (ÜÇBİN) TATLI SU FRENGİ-LEVANTENLER.

VE YAHUDİLERİN BÜYÜK BİR ÇOGUNLUG İTALYAN UYUKLU VE İTALYAN MASON LOCASININ ÜYELERİ İDİLER.

KIZIL SULTAN ABDÜL HAMİD 1895-DE BASLATTIRDIĞI ERMENİ KATLIAMLARI İLE VAZİFESİNİ YAPMIS VE GÖRÜNMEZ ÜSTÜN KUVVETLERİN PROGRAMINI GERÇEKLEŞTİRMİŞTİ.

1908-DE İTTİHAT VE TERAKKİ PARTİSİNİN ORDUSU İSTANBULA GİREREK, VAZİFESİ BİTEN SULTAN ABDÜL HAMİDİ TAHTDAN ASAGA ALDI VE HÜKÜMETİ ELE GEÇİRDİ.

1914-DE İTTİHAT VE TERAKKİ PARTİSİ, GÖRÜNMEZ ÜSTÜN KUVVETLERİN YENİ BİR PROGRAMINI UYGULAMAYA BAŞLADI.

1914-DE BASLIYAN BİRİNCİ DÜNYA HARBİNDE ALMANLARIN YANINDA YER ALDI VE BU KARGASALIKTAN İSTİFADE EDEREK 24 NISAN 1915-TE DAHİLİYE VEKİLİ, ÇİNGENE ASILLI, FARMASON ÜSTADİ AZAM TALAT PASA ERMENİ MİLLETİNİ SOYKIRIMINA UGRATMAYA BAŞLADI.

VE SENELERDEN BERİ DEVAM EDEN ERMENİ MESELESİNİ BİR KAÇ AY İCİNDE TARİHTE GÖRÜLMEMİS BİR VAHSET TATBİK EDEREK TEMİZLEDİ.

VE 19 MAYIS 1919-DA PROGRAMIN SON KİSİMİ TATBİK EDİLMİYE BAŞLADI.

MUSTAFA KEMAL SAMSUNA ÇIKTI. VE YENİ VE KUVVETLİ BİR TÜRKİYENİN KURULMASINA BAŞLADI.

BİR SAAT ZENBEREĞİ DAKIKLIĞI İLE UYGULANAN YENİ TÜRKİYE PROGRAMININ KÖKLERİNİN SELANIKTE OLMASI ACABA TESADÜFMÜ İDİ ?

KATIYYEN.

1914-TEN 1923-E KADAR ANATOLYADA VUKU BULAN OLAYLAR, GÖRÜNMEZ ÜSTÜN KUVVETLERİN YENİ BİR DÜNYA KURMA PLANLARININ SADECE BİR KISIMI İDİ.

EGER GÖZÜNÜZ VARSA, GÖRÜRSÜNÜZ. EGER AKLINIZ VARSA, ANLARSINIZ.

BUGÜN DÜNYADA VUKU BULAN BÜTÜN OLAYLAR, GÖRÜNMEZ ÜSTÜN KUVVETLERİN PLANLARININ UYGULAMALARININ SONUÇLARIDIR.

B. Q.

ՈՒՄՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ՅՈՒՆԱՍՏԱՆ... (Ծար. էջ 2-էն)

կ'ընծայուէին, և անոնք, իբր հերոս, իրենց ծննդավայրը վերադառնալէ յետոյ. տե-
ւական կը փառաբանուէին ու նաեւ, բացառիկներն ալ, կ'աստուածացուէին:

Հռոմէական կայսրութեան իշխանութեան շրջանին, Հռոմէացիներն ալ մասնակ-
ցիլ կ'սկսին Ողիմպիական խաղերուն:

Նոյնիսկ Ներոն, Հռոմէացի կայսրը, խաղերուն երաժշտութեան և բանաստեղծու-
թեան մրցարշան ալ կ'աւելցնէ, որ ինքն ալ կարենայ մասնակցիլ անոնց:

Եւ այս Ողիմպիական խաղերը կը շարունակուին Զ. Ե. մինչեւ 393-թ.ը:

Եւ այդ թուականէն յետոյ, Հռոմէացի կայսրը Theodosius, որ Զ. Ե. 380-թ.ին քրիս-
տոնէութիւնը պետական կրօն հռչակած էր, Զ. Ե. 394-թ.ին, կ'արգիլէ Ողիմպիա-
կան խաղերը. «Հեթանոսական արարողութիւններ են» ըսելով:

**

Olympia սրբավայրը՝ մեր տեսած յունական դասական գլխաւոր յուշարձաններու
կեդրոնն է:

Թէեւ, շատ մեծ մասը անոնց, փլատակ վիճակի մէջ է: Բայց, այդ վիճակով ան-
գամ, այս հոյակապ յուշարձաններուն առջեւ չսքանչանալ անկարելի է:

Եւ Յուշարձաններուն գտնուած վայրը՝ բնութեան հրաշալիք մըն է:

Յունաստանը՝ ընդհանրապէս ժայռոտ երկիր է, և կանանչութիւնը՝ քիչ: Բայց
Օլիմպիա-ի սրբավայրը շրջապատող բլուրներուն վրայի անտառներուն խտութիւնը
և մանաւանդ գոց կանանչ և փայլուն գոյները՝ երբեք ուրիշ տեղ չենք տեսած:

«ΝΑΡΑΙ» & «Λαογραφία» Ρθϋ 174 = 2-

Օլիմպիա սրբավայրը, իրապէս ալ, պաշտամունքի արժանի ուխտատեղի մըն է:
Եւ մտածել, որ յունական և հայկական իշխանութիւններուն՝ իրարու հետ հա-
մերաշխ և օգտաւէտ կապեր հաստատած տարիներուն, հայոց Արշակունի թագա-
ւորը՝ «Վարազդատ», Զ. Ե. 393-թ.ին, կը մասնակցի ողիմպիական խաղերուն, և
յաղթական կ'ելլէ:

Եւ 393-թ.ի խաղերուն իբրեւ յաղթական՝ մարմարեայ յիշատակարաններուն
վրայ արձանագրուած է Հայոց Արշակունի Վարազդատ թագաւորին անունը:

Իբր վերջին խօսք պիտի ըսենք.՝ Յալիտենական անէծք՝ բոլոր անոնց, որոնք
հայկական և յունական բարեկամութիւնը և գործակցութիւնը քանդեցին:

ԺԱՄԱՆԱԿԻ ԴԷՊՔԵՐՈՒՆ ԼԵՏ

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԳՐՈՂԷ ԴԷՊԻ ՉԱՐԸ

Գրեց՝ ՎԱՐԴԱՆ Ա. ՔԼԵՅ. ՏԻԻԼԿԷՐԵԱՆ

Կը գրեն ու կը խօսին քաղաքակիրթ աշխարհի բարոյագէտները, թէ դարուս երիտասարդութիւնը կ'ապրի անսկզբունք և անհիտէալ կեանք մը:

Չունի իր երազային իղձերը ոգետորոյ ու հրահրող հեռանկարներ, և ի վուր կը վատնէ իր գարուն կեանքին անփոխարինելի տարիները՝ մահացու յուսալքումներու և պատրալից վայելքներու փորձութեան մէջ:

Այսպիսի վճռական ու աժան յայտարարութիւն մը չի համապատասխաներ ճշմարտութեան և կարելի չէ, ներկայ բորբոսած բարքերու մէջ, չգտնուին բանիմաց երիտասարդներ որ չսեւեռեն իրենց մտահայեացքը ոսկեգօծ հորիզոններու ու չփափաքին տեսնել իրենց գլխուն վերեւ ճառագայթող լուսապայծառ երկինքը:

Երիտասարդ է մարդ, իր սրտի կենսութիւն տրոփումներով, երբ շողարձակում կու տայ իր մտասեւեռումներուն, և զառամած է մարդ՝ իր հիւանդագին հիսաթափութիւններով, երբ՝ հոգին գրկած է հաւատքի և յուսադրումներու լուսաճաճանչ վերացումներէն:

Ճշմարտապէս, մարդկային ինչպիսի՞ յատկանիշներով կրնանք ներկայացնել երիտասարդը, որ հոգեպէս, բարոյապէս և ֆիզիքապէս կը գտնուի պայթուցիկ ու հաճոյավառ բռնկումներու մէջ, և պատրաստ է, իր ներքին միտումներուն հետ չնկոյաշնակոտող իրողութիւններու դէմ ընդվզելու, ըմբոստանալու և պայքարելու:

Ափսոսալի չէ՞, որ իր ծաղկաբոյր հասակին մէջ, փոխանակ գաղափարական նկրտումներու տեսլականը տալու իր արծուեթօնի խոյանքներուն, կը նախընտրէ սուգրփիլ հեշտավառ հաճոյքներու տղմոտ ջուրերուն մէջ:

Անշուշտ, դիւրաւ մահացու մոլութեանց քառսին մէջ չէր իյնար, եթէ իր հոգիին պայծառատեսութիւնը չմթանգներ մարուանայի զգլխիչ գուլաներու մէջ:

Երիտասարդ մը, որ կ'անգիտանայ այս շնչող մոլորակին հոգետր ազդակները և իր անծայրածիր երեակայութեան համապատկերին վրայ կը տեսնէ իր կիրքերը զովացնող սուտ ու պատրալից աշխարհ մը, բնական է, որ ինքնաբերաբար ինքն ալ դառնայ սուտ մարդ մը, առաւել՝ աժան զոհ մը՝ շահագործողներու անյագուրդ ախորժակներուն:

Բացայայտ է, աշխարհի դէպքերը, իրողութիւնները և մարդիկը ողջմտութեամբ դատող մտատրականութեան համար սա անհերքելի ճշմարտութիւնը, թէ գիտարուեստը՝ հրաշքի հաւասարագօր գիտերով և մարդկութեան ընծալած հանգստաւէտ կեանքի դիւրութիւններով, չյաջողեցաւ ցարդ՝ ստեղծել ՆՈՐ ՄԱՐԴԸ, որ քրիստոնէական հաւատքով գօտեպնդուած՝ ազատագրէր մարդկային հասարակութիւնը երկրի նիւթապաշտ կապանքներէն և պարզէր մարդոց հոգետր աշխարհին մէջ ՅԱՒԵՐԺՈՒԹԻՒՆԸ, լուսաճաճանչ հորիզոններով:



Կարելի՞ է, բարոյագուրկ աշխարհի մը ապառողջ կլիմայի տակ, մարդկային հոգին առաքինութեան կազդուրիչ թթուածինը շնչէ, ուր՝ բնականը կը հոչակուի անբնական, հարազատը՝ անհարազատ, կանոնականը՝ անկանոն, օրինատուր՝ ապօրին, ազգասէրը՝ ազգադաւ, անմեղը՝ մեղաւոր, և բարեպաշտը՝ անբարիշտ:

Այս հակասութիւններու և հակադրութիւններու լաբիրինթոսին մէջ շնչող մտակորոյս երիտասարդը, բնական է, որ իր դատողութիւնը կորսնցնէ ու բարբարոսանալ, գոռոզանայ և դառնայ ժողովուրդը կեղեքող ու խոշտանգող անզուսպ զագան մը:

Մերօրեայ երիտասարդութեան մեծ մասին իտէպը նիւթապաշտութիւնն է, մարմնապաշտութիւնը և... ոճիրը:

Բռնութիւնը կը նկատէ իր ազատութիւնը, սեռային ու սիրային կիրքերը՝ իր կարգախօսը, ապօրինութիւնը՝ իր օրէնքը, անաստուածութիւնը՝ իր հաւատքը, անպատութիւնը՝ իր սկզբունքը, դրամը՝ իր կուտքը, մարդասպանութիւնը՝ իր արհեստը, չարագործութիւնը՝ իր մասնագիտութիւնը, անպատուութիւնը՝ իր բարոյականը, ասփըշտակութիւնը՝ իր իրաւունքը, ազգը՝ ռեւէ ժողովուրդ, հայրենիքը՝ որևէ կրկիր և արտագաղթը՝ իր մեծ ու միակ երազը:

Այս դիալիս կերպարով երիտասարդը՝ մարդակերպ ճիւղ մըն է, որ կը սպաննայ ամէն մարդու կեանքին և որուն կարկառուն նմոյշները Երեւանի մութ ու խոնար բանտախուցերուն մէջ, կը սպասեն իրենց... ազատ ու անպարտ արձակման:

★ ★ ★

Նորագոյն սերունդը՝ ջղային է, անհամբեր ու անապարող: Կը տատապի համբերութեան ու սպասումի անհանգստութենէն: Այսօր կը սերմանէ և այսօր կ'ուզէ հրկիւզել: Հիմա ծառը կը տնկէ և կ'ուզէ հիմա պտուղը քաղել: Այս րոպէին կ'ուզէ տեսնել իր ջանքերուն արդիւնքը: Ո՛չ վաղը, ո՛չ աւելի ուշ, այսօր է ժամանակը պտղաբերութեան:

Հոգեւոր գործերու մէջ եւս՝ համանոյն անհամբերութիւնը կը ցուցադրուի: Տրամադրութիւն չունինք ցաւեր ու դժուարութիւններ կրելու, համբերութիւն չունինք յուսալու, պայքարելու և տոկալու: Պատրաստ ենք ամէն բանի սկիզբը՝ յուսալքուելու և զինաթափ ըլլալու:

Չենք հասկնար ու երբեք պիտի չհասկնանք, որ մեր հանրօգուտ ծառայութիւնները, մեր մեծ ու պզտիկ բարեգործութիւնները պարապութեան մէջ չեն իյնար ու կորսնուի:

Կարելի՞ է, որ մոլութիւններու մէջ զեխ կեանք ապրած խելակորոյս մարդը, միևնչեւ մահ ալքուի բաժակը ձեռքին մէջ բռնած՝ բարոյապէս բուժուի ու զգաստանայ:

Կրնա՞յ երիտասարդ մը կամ երիտասարդուհի մը այս հեշտագրգիտ ժամանակներուն՝ անաղարտ պահել իր կուսութիւնը ու մերժել փորձութիւններու ձգողական հրապոյրները, որ կը մղեն զինք երազային վայելքներու ըմբռնչխնամին:

Ո՞ր մարդը կրնայ ապրիլ ու գործել առանց սուտի, առանց կեղծիքի, առանց շողորթութեան և խաբէութեան:

Անոնք, որ անհրաւ շահը իրենց յաջողութեան նպատակ ըրած են, կը գտնուին այսօր դրամի բրգացած դէզերու վրայ թառած՝ կրեստսեան արեալաւառ կատարներու վրայ:

Իսկ անոնք, որ Աստուծոյ խօսքին հետեւելով՝ անհրաւ շահերը անգոսնած են. կը գտնուին թէև նիւթապէս ողորմելի կացութեան մէջ, բայց

(Ծար.դ էջ 11)


Handwritten mark

ՈՒՒՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ
ՅՈՒՆԱՍՏԱՆ

- ՍԱՄՈՍ ԿՂՋԻ -

... ՈՐ ՅՈՒՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՆ ԶԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ
ՄԵԾԱԳՈՅՆ ՏԱՂԱՆԴՆԵՐԷՆ ԵՐԿՈՒԹԻՆ՝
ՓԻԼԻՍՈՓԱՅ «EPICURE»ԻՆ ԵՒ
ԱՍՏՂԱԳԷՏ "ARISTARQUE"ԻՆ
ԾՆՆԴԱԿԱՅՐԸ ԵՂԱԾ Է:
ԳԻՏՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԿԱՏԱՐՈՒԱԾ
ՄԵԾԱԳՈՅՆ ԱՆԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ
[ԿՐԷԺ ՈՒԲԷՆԵԱՆ]



ՍԱՄՈՍ -ի կեղրոնական քաղաքը

Մեր երիտասարդության տարիներին ի վեր, հիացող մը եղած ենք Յունական Զաղաքակրթության:

Բայց, անհասկնալի պարագայ մը կար: Չէինք ուզեր համոզուիլ այն իրողության, թէ հին պատմական շրջաններուն, Յոյն գիտնականները՝ Աշխարհին անշարժ ըլլալուն և մոլորակներուն և մանաւանդ Արեւին Երկրին շուրջ դառնալուն - Երկրակեդրոն - Heliocentrisme- կը հաւատային:

Յոյն գիտնականներուն այս մեծ սխալը անկարելի կը թուէր մեզի: Երբ կը մտածէինք, թէ Այնշթայնէն (Einstein) 2500 տարիներ առաջ, Յոյն փիլիսոփայ Heraclite-ը Յարաբերականութեան - Relativité- օրէնքը յղացած էր (Այնշթայնին այս օրէնքը իրեն վերագրելը՝ պարզապէս գիտական իմաստով «Հրէական աճպարարութիւն» մըն է):

Նոյնպէս՝ ասկէ 2400 տարիներ առաջ, յոյն փիլիսոփայ Democrite, բնութեան մէջ գտնուող բոլոր նիւթերու "ATOMES" -ներէ բաղկացած ըլլալու տեսութիւնը մէջտեղ նետած էր:

Գիտական այսքան բարձր մակարդակի տէր Յոյն գիտնականներուն, մեր տիեզերքին արեւակեդրոն (Heliocentrique) ըլլալը չհասկնալնին անհաւատալի էր:

* * *

Ընդհանրացած համոզում մըն է, որ առաջին անգամ Բոլոնացի աստղագետ Կոպեռնիկոսն (Copernic) եղաւ, 1543-ին հրատարակած իր գիրքին մէջ, մեր տիեզերքին արեւակեդրոն ըլլալու տեսութիւնը առաջադրողը:

Այս տեսութիւնը, այն տարիներուն, մեծ աղմուկ հանած էր: Մեծ թիւով հակառակորդներ և սակաւաթիւ կողմնակիցներ ունեցաւ:

Կրօնական սկզբունքներուն հակառակ եղող այս տեսութիւնը, Կաթողիկէ Եկեղեցիին կողմէ մեծ ընդդիմութեան բախած է:

Կոպեռնիկի տեսութիւնը պաշտպանողներէն իտալացի գիտնական Կալիլէ (Galilée), 1633 թուականին, Հռոմի մէջ, հաւատաքնութեան (inquisition) դատարանին առջև կը հանուի: Եւ ճնշումներու տակ, Կալիլէ ստիպուած կ'ըլլայ իր համոզմունքը դրժելու: Եւ ան կ'ընդունի կաթողիկէ Եկեղեցիին տեսակետը թէ՛ Աշխարհն անշարժ է և տիեզերքին կեդրոնը ...: Եւ դեռ զրոյցներ կան, որ Կալիլէ, հակառակ ստիպողաբար պահ մը ընդունելուն որ Երկիրը անշարժ է, տեղ մը չի դիմանար և կը հառաչէ՝ «Եւ սակայն, ան կը դառնայ» "ET POURTANT, ELLE TOURNE" :

Handwritten mark

Կոպեռնիկի տեսութեան թեր և դեմ եղողներուն վիճաբանութիւնները երկար տարիներ կը տեւեն: Եւ տարիներ ետք, վերջապէս, "Heliocentrique" «Արեւակեդրոն»ի տեսութիւնը գիտականօրէն և վերջնականապէս կը փաստուի:

Եւ այս մեծ գիտնականը Արեւակեդրոն-ի համակարգը առաջադրող աստղագէտն ըլլալով, պատմութեան կ'անցնի: Մինչդէռ այս վարկածը՝ գիտութեան պատմութեան մէջ կատարուած մեծագոյն անարդարութիւնն է:

Արեւակեդրոն համակարգը առաջին անգամ, փաստերով ապացուցանողը՝ Զ.Ա. 310 թուականներուն Սամոս (SAMOS) կղզին ծնած, յոյն Արիստարքոսն (Aristharque) էր, որ Արեւակեդրոն համակարգը իր գրութիւններով յաւերժացուցած է:

Այս մասին կը վկայեն յոյն գիտնականներ՝ Արքիմէդ (Archimede) [Զ.Ա. 250] և Պլուտարքոս (Plutarque) [Զ.Ե. 75]:

Արիստարքոս, Արեւակեդրոն համակարգի իր մտածումները, միայն գրելով չէ բաւարարուած:

Այն թուականներուն շատ նախնական և անկատար պայմաններով յաջողած է Լուսինին Երկրագունտին և Արեւին մեծութիւնները և ասոնց իրարմէ ունեցած հեռաւորութիւնները չափել:

Եւ այս չափերուն մէջ տեսնելով Արեւին անհաւատալի մեծութիւնը, Արեւակեդրոնութեան համակարգին անժխտելի ապացոյցը ներկայացուցած է՝

«Մեծ մարմին մը [Արեւը] պզտիկ մարմնի [Երկիրը] մը շուրջ չի կրնար դառնալ: Այլ՝ պզտիկ մարմին մը [Երկիր - Աշխարհը] մեծ մարմնին [Արեւին] շուրջ կը դառնայ»:

Եւ այս «յեղափոխական» տեսութեան հակառակ եղող Աթենքի յետադիմական կրօնական շրջանակները, Արիստարքոսին դեմ յարձակումի կ'անցնին:

Չէ՞ որ, յունական դիցաբանութեան կեդրոնը և բոլոր «Աստուածներուն» բնակավայրը, Աշխարհն էր:

Եւ Աշխարհը ձեւով մը նսեմացնող և Արեւին ենթարկող Արեւակեդրոն տեսութիւնը, Աթենքի կրօնաւորներուն համար մահացու կրնար ըլլալ:

Այս պատճառաւ, Արիստարքոսին դեմ, սպառնալիքները կը բազմանան:

Աթենացի փիլիսոփայ Գլէանթ (Cleanthe), իր դեմ գրութիւն մը կը հրապարակէ և կը պահանջէ զինք ամբաստանել «անկրօնութեամբ», որուն պատիժը մահապարտութիւնն է:

Եւ Արիստարքոս կը հարկադրուի, ստիպողաբար, Աթենքէն հեռանալ: Եւ այս ձեւով, իր Արեւակեդրոն տեսութիւնը, մոռացութեան կ'ենթարկուի:

Զ.Ա. 200 թուականներուն, բաբելոնացի Սելիւքոս (Seleucos), մեծ խանդավառութեամբ կ'աշխատի վերակենդանացնել Արիստարքոսին Արեւակեդրոն տեսութիւնը: Բայց հետեւորդ չունենար, անկրօնութեամբ ամբաստանուելու վախին պատճառաւ:

Արքիմէդ և Պլուտարքոս եւս, կը հաստատեն Արիստարքոսին Արեւակեդրոն տեսութիւնը, բայց՝ այդքան:

Յետոյ՝ կ'անցնին 15 դարերու խիստ խաւարակուռ կրօնական տարիները:

Եւ կու գայ շրջանը Կոպեռնիկոսի (Copernic), որ կը հրատարակէ այն գիրքը, որուն մէջ Արեւակեդրոն տեսութիւնը բոլորովին իրեն կը վերագրէ:

Եւ Կոպեռնիկոս հակառակ, որ շատ լաւ գիտէր և կարդացած էր Արիստար-

«Եւստիքի» թիւ 175

17

քոսի Արեւակեղրոն տեսութիւնը, միայն իր առաջին գրութեան մէջ տեղ մը կը նշէ անոր անունը, բայց իր յետագայ գրութիւններուն մէջ, բնաւ չ'անդրադառնար Արիստարքոսի մասին:

Եւ այս ձեւով Կոպեռնիկոս, գիտութեան պատմութեան մեծագոյն ապերախտութիւնը կը գործէ:

Եթէ Արիստարքոսի ապրած տարիներուն, գիտական շրջանակները ընդունէին անոր Արեւակեղրոն տեսութիւնը, Գիտութիւնը 1800 տարի շահած պիտի ըլլար: Եւ դժուար չէ ենթադրելը, թէ այս ուշացումը, Աշխարհի քաղաքակրթութեան համար ինչ մեծ, ահաւոր կորուստ է:

Արդեօք քաղաքակիրթ «աշխարհ»ը ի՞նչի կ'սպասէ. պատմութեան մէջ կատարած այս մեծ անարդարութիւնը սրբագրելու համար, որ Արիստարքոսին, գիտական պատմութեան մէջ, իր արժանի տեղը տրուի:

**

Յունական Սամոս կղզիին տրուած մեր այցելութեան նպատակն էր. նաե՛ւ տեսնել մեծ փիլիսոփայ Եպիկուրի (Epicure) ծննդավայրը:

Եպիկուրի գաղափարները մեզ շատ տպաւորած են: Իր կեանքի փիլիսոփայութիւնը կը կեղրոնանայ «հաճոյք»ի մէջ: Ան կ'ըսէր, թէ մարդուն ապրելու նպատակը՝ հաճոյքն է: Բայց՝ ո՛չ թէ կիրքերու հաճոյքը: «Մարդկութիւնը իր կիրքերու հաճոյքներուն կրնայ տիրապետել զօրացնելով հոգեկան հաճոյքները»:

Եւ մարդկութիւնը, զօրացնելով իր հոգեկան հաճոյքները, կրնայ իր կեանքին մէջ հասնիլ իսկական երջանկութեան: Եպիկուր հակառակ էր, իր ժամանա-

կակից կրօնականներուն, որոնք մարդկութեան մէջ կ'արծարծէին Աստուծոյ դէմ վախը և մանաւանդ՝ մահուան հանդէպ մղձաւանջը:

Շատ հոշակաւոր է իր հետեւեալ տեսակետը. «Մեր ապրած միջոցին մահը չկայ: Բայց մահին գալէն յետոյ՝ մենք չկանք»:

Եպիկուր բոլոր ժամանակներուն ամենէն իրապաշտ փիլիսոփան է իր գաղափարներով: Եւ մենք հիացող մըն ենք իր գաղափարներուն:

**

Ք

23 Մայիս 2002-ին, ինքնաշարժով վերադարձանք Փաթրասէն (Patras) Աթէնքի օդակայանը, և հոնկէ ճամբայ ելանք Օլիմպիք Էրուեյզ (Olympic Airways) օդանաւով, դէպի Սամոս (Samos) կղզին:

Չէինք կրնար երեւակայել, թէ եգէական Ծովը՝ անթիւ անհամար յունական կղզիներու փունջ մըն է:

Կղզիներէն մէկը չլմնցած՝ միւսը կ'սկսէր: Եւ խորհեցանք, թէ այսքան կղզիներուն մէջէն նաւերը, մանաւանդ գիշերները, ինչպէ՞ս իրենց ճամբան ապահով կրնային շարունակել:

Աթէնքէն Սամոս օդանաւի ճամբորդութիւնը, հազիւ 50 վայրկեան տեւեց, և օդանաւը իջաւ տեղի օդակայանը:

Մեր առաջին տպաւորութիւնը այն եղաւ, որ օդակայանին անունը Փիթակոր (PYTHAGORE) էր:

Ինչո՞ւ Սամոսի օդակայանը իր ամենէն արժեքաւոր զաւակներուն՝ Եպիկուտի կամ Արիստարքոսի անունով չէր կոչուեր, այլ՝ Փիթակոր:

Մոռցանք ըսելու, թէ թուաբանագէտ Փիթակորն ալ Սամոս ծնած էր:

Բայց, մեր ալ համոզումով՝ Եպիկուտին և Արիստարքոսին քով՝ Փիթակորը, բաղդատաբար, երկրորդական անձնաւորութիւն մըն է:

Թէև ան, թուաբանութեան մէջ, իր անունը կրող «Աղիւսակ»ի և «Եռանկիւն»ի անկիւններու գիտերով ծանօթ էր, բայց «Աղիւսակ»ը Փիթակորին հնարքը չէր:

Աղիւսակը արդէն, Բաբելոնի մէջ, ծանօթ էր...

Օդակայանին մէջ, ինքնաշարժ մը վարձեցինք:

Սամոս կղզիին կեդրոնական քաղաքին անունը՝ կղզիին անունով կը կոչուի: Ինքնաշարժը վարձու տուող պաշտօնեային հարցուցինք, թէ Սամոսի մէջ ո՞ր պանդոկը իջնել կը յանձնարարէ:

Պաշտօնեան «Ինչո՞ւ համար Սամոս պիտի երթաք» ըսաւ, և շարունակեց. «Պետք չկայ Սամոս երթալու: Օդակայանին մօտ "Phytagore" քաղաքի պանդոկները լաւագոյններն են, և անոնց մօտ են կղզիին ամենատեսարժան վայրերը»:

Կրկին՝ անհասկնալի երեւոյթ մը պարզուեցաւ մեզի համար:

Սամոսին պատմական կեդրոնը եղած և ներկայիս Փիթակոր կոչուած Antique Samos-ը Զ.Ա. 6-րդ դարուն, կղզիին իմաստուն բոնակալ՝ Polycrate-ի կողմէ հիմնուած էր: Եւ ասոր իշխանութեան տարիներուն, Սամոս իր

(Ծարձ' Լջ 3)



Փիթակոր

7/16.7.2002

ԿԸ ՀՐԱՊԱՐԱԿԵՆՔ ԹՈՒՐԲԵՐՈՒՆ (ԻԲՐ ԹԷ) ԶԳԻՏՑԱԾ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ
 ՍԵՆՏԱՆԻԿԻ ՄԷՋ ՍԿՍՈՂ ԵՒ ԹՈՒՐԲ, ՀԱՅ ԵՒ ՅՈՅՆ ԱԶԳԵՐՈՒՆ ԺԱԿԱՏԱԳԻՐՆԵՐԸ
 ՓՈԽՈՂ ԵՐԵՔ ԿԱՐԵՒՈՐ ԴԷՊԲԵՐ
 ԵՐՐՈՐԴ ԴԷՊԲ.—

6-7 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1955-ԻՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՊՈԼՍՈՅ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ

Յարգելի Պոլսաբնակ երիտասարդներ. դուք 6-7 Սեպտեմբեր 1955-ին տեղի ունեցած Պոլսոյ ողբերգութիւնը գիտէ՞ք արդեօք:

Չէք գիտե՞ր. իրաւունք ունիք.

Այդ թուականէն ի վեր, գրեթէ 50 տարիներ անցեր են. դուք, այդ թուականին, չէիք ճնած անգամ. բայց դուք, այս մասին, բնաւ չկարդացի՞ք. բնաւ չհետաքրքրուեցա՞ք.

«Չլսեցի» «չտեսայ» «չեմ գիտեր»—իրաւունք ունիք. դուք, հայկական ցեղասպանութիւնն ալ, բնաւ չէք գիտեր. դուք, միայն ձեզի սորվեցուցածնին գիտէք:

«Հայերը՝ թուրքերը ջարդեր են»: Խեղճեր: Անոր համար է, որ հայերուն հայրենիքը եղող Արեւելեան Անաթոլիոյ մէջ, այսօր մէկ հատ հայ չկայ:

Բայց՝ միլիոնաւոր թուրքեր կան:

Եթէ հայերը ջարդեցին թուրքերը, ուրկէ՞ ելան Անաթոլիոյ մէջի միլիոնաւոր թուրքերը: Ինչպէ՞ս կը հաւատաք ձեր առաջնորդներուն յերիւրածոյ ցարտութիւններուն:

Աւելի ծիշդ՝ հաւատալ կը ձեւեցնէք:

Որովհետեւ դուք, իրականութիւնը ուրիշներէն աւելի լաւ գիտէք: Հայերը ջարդած ձեր մեծ հայրերը՝ ձեզի պատմած են իրենց «քաջագործութիւնները»:

Վերադառնալ 6-7 Սեպտեմբեր 1955-ի Պոլսոյ ողբերգութեան:

Մենք, 6-7 Սեպտեմբերի գիշերը, այս ողբերգութիւնը՝ առաջին վայրկեանէն մինչև վերջին վայրկեանը «ապրեցանք»:

Տեսաւք, ժողովուրդ ըսուած թուրք խուժանին կատղիլը:

Ամէն բան, 6-7 Սեպտեմբերի գիշերը “ISTANBUL EKSPRES” թերթին հրատարակած երկրորդ տպագրութեան մէջ, մեծ տառերով տրուած գրգռիչ լուրով սկսաւ՝ «Սելանիկի մէջ Աթաթուրքին ճնած տունը ոմբակոծուեցաւ»:

Այս թերթին տուած լուրը՝ ազդանշան մըն էր: Այս՝ դէպքերուն սկսելու համար տրուած հրաման մըն էր:

Կէս ժամ չանցած՝ Պոլսոյ յոյներուն, հայերուն խանութներուն, տուներուն, եկեղեցիներուն վրայ յարձակումը սկսաւ:

Պատճա՞ռը: Յոյները, Սելանիկի մէջ, Աթաթուրքին տունը ոմբակոծեր են:

Իբր թէ, ասոր վրէժը պիտի լուծէին:

Բայց այս՝ առաջուրէն, ժամացոյցի ճշդապահութեամբ, ծրագրուած էր:

Եւ կասկած չկայ, որ Պոլսոյ «կեսավոր»ներուն վրայ յարձակման ծրագիրը՝ “MIT” [Թրքական հետախուզական-տեղեկատուութեան կազմակերպութիւն] սպայակոյտին կողմէ, պատերազմական ծրագրի մը նման, շատ առաջուրէն պատրաստուած էր:

Պոլսոյ կեսավորներուն թաղամասերուն վրայ յարձակումը՝ ամէն կողմ նոյն ատեն, ժամը 21-ին սկսաւ:

«Կիպրոսը՝ թուրք է», «Դրօշակ կախեցէք» վանաստուներով եկող հազարաւոր թալանողներ՝ առաջուրէն ճշդուած «կեսավորներուն» խանութները, չտեսնուած վայրագութեամբ քանդելով և թալանելով կը յառաջանային:

Եւ այս վայրենիներուն արգելք ըլլալու համար, մէջտեղները ոչ մէկ ոստիկան և ոչ ալ զինուոր մը կար: [Ծարուսակելի]

TÜRKLERİN (SÖZDE) BILMEDİKLERİ GERÇEKLERİ AÇIKLIYORUZ
 SELANIKTE BASLIYAN, VE TÜRK, ERMENİ VE YUNAN MİLLETLERİNİN KADER-
 LERİNİ DEĞİSTİREN ÜÇ MÜHİM OLAY.

ÜÇÜNCÜ OLAY

ALTI - YEDİ EYLÜL 1955-TE VUKU BULAN İSTANBUL FACIASI

SAYIN İSTANBUL GENÇLERİ. SİZ ALTI-YEDİ EYLÜL 1955 TARİHİNDE VUKU BULAN İSTANBUL FACIASINI BİLİRMİSİNİZ ? BİLMİYORMUSUNUZ ? HAKLISINIZ. ARADAN NERDE İSE 50 SENE GEÇMİŞ. O TARİHTE SİZ DOĞMAMISTINIZ BİLE. FAKAT SİZ, HIÇ OKUMADINIZ MI ? HIÇ MERAK ETMEDİNİZMİ ? "İSİTMEYİM, GÖRMEDİM, BİLMİYORUM".

HAKLISINIZ. SİZ ERMENİ SOYKIRIMINI DA HIÇ BİLMEZSİNİZ. YALNIZ SİZE ÖĞRETİLENİ BİLİRSİNİZ. "ERMENİLER KESMİŞ TÜRKLERİ" VAH ZAVALLILAR. ONUN İÇİN ERMENİLERİN VATANI OLAN DOĞU ANATOLIADA BUGÜN BİR TEK ERMENİ YOK. FAKAT MİLYONLARCA TÜRK VAR. ERMENİLER KESMİŞ İSE TÜRKLERİ, NERDEN ÇIKTI ANATOLYADAKI MİLYONLARCA TÜRK. NASIL DA İNANIRSINIZ, SİZİN BASUGLARINIZIN UYDURDUGU PALAVRALARA.

DAHA DOGRUSU, İNANIR GÖRÜNÜRSÜNÜZ. ÇÜNKÜ SİZ HAKİKATI HERKESTEN İYİ BİLİRSİNİZ. ERMENİLERİ KESEN BÜYÜK BABALARINIZ BU "KAHRAMANLIKLARINI" ANLATMISLARDIR SİZE. GELELİM 6-7 EYLÜL 1955 İSTANBUL FACIASINA.

BİZ, 6-7 EYLÜL GECESİ, BU FACIAYI, BİRİNCİ DAKİKASINDAN, SON DAKİKASINA KADAR YASADIK. GÖRDÜK, HALK DENİLEN TÜRK GÜRHUNUNUN NASIL CANAVARLASTIĞINI.

HERSEY, 6-7 EYLÜL AKSAMI, "İSTANBUL EKSPRES" GAZETESİNİN ÇIKARDIĞI İKİNCİ BASKISINDA BÜYÜK PUNTOLARLA VERDİĞİ KISKIRTICI HABERLE BAŞLADI.

"SELANIKTE ATATÜRKÜN DOĞDUGU EV BONBALANDI".

BU GAZETENİN VERDİĞİ HABER, BİR PAROLA İDİ. BU, OLAYLARIN BAŞLAMASI İÇİN BİR EMİR İDİ.

ARADAN YARIM SAAT GEÇMEDEN İSTANBULDAKİ RUMLARIN VE ERMENİLERİN DÜKKANLARINA, EVLERİNE VE KİLİSELERİNE HÜCUM BAŞLADI.

SEBEP? YÖNANLILAR SELANIKTE ATATÜRKÜN EVİNİ BONBALAMISLAR.

SÖZ DE ONUN İNTİKAMINI ALACAKLARDI.

FAKAT BU, BİR BAHANEDİ.

HER SEY EVVELDEN BİR SAAT DAKIKLIĞI İLE PLANLANMISTI.

VE HIÇ SÜPHE YOK KI, İSTANBULUN GÂVÜR MAHALLELERİNE HÜCUM PLANI MIT-IN KURMAY SUBAYLARI TARAFINDAN BİR HARP PLANI GİBİ ÇOK EVVELDEN HAZIRLANMISTI.

İSTANBULUN GÂVÜR MAHALLELERİNE HÜCUM, HER TARAFTA AYNI ZAMANDA SAAT 21-DE BAŞLADI.

"KIBRIS TÜRKÜTÜR", "BAYRAK ASIN" VAVEYLALAR İLE GELEN BİNLERCE ÇAPULCU, EVVELDEN TESBİT EDİLEN GÂVÜR DÜKKANLARINI GÖRÜLMEMİŞ BİR VAHSETLE YIKIP TALAN EDEREK İLERLİYORLARDI.

VE BU CANAVARLARA MANİ OLMAK İÇİN ORTALIKTA NE BİR POLİS NE DE BİR ASKER VARDI.

(DEVAM EDECEK).

8. Q.

ՈՒՒՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ՅՈՒՆԱՍՏԱՆ ... (Ծար. էջ 2-էն)

ամենէն փայլուն և բարգաւաճ շրջանը կը բոլորէ... ...եւ 1955-ին ի պատիւ թուաբանագէտ Փիթակորին, իր անունը կը տրուի այս քաղաքին ալ:

Այո, հեզնախառն հարց տանք... Ինչո՞ւ տրուի "Antique Samos"ին իր հիմնադրին՝ Փոլիքրաթի անունը, որ իմաստուն, բայց բռնակալ մը եղած էր:

Ինչո՞ւ տրուի Եպիկուտին անունը որ, «աստուած»ները ուրացող, իրապաշտ փիլիսոփայ մը եղած էր:

Ինչո՞ւ տրուի Արիստարքոսին անունը, որ գիտութեան մէջ մեծագոյն յեղաշրջումը կատարած էր, բայց՝ «անկրօնութեամբ» ամբաստանուած:

Ափսո՛ս: Արժանիները թերագնահատուած են: Որպէսզի, նախակրթարանի աշակերտներուն անգամ ծանօթ թուաբանագէտ Փիթակորին անունը տրուի, որ ամենէն անվնասն է և ամէնուն և մանաւանդ թուրիստներուն ծանօթ անուն մը:

ԱՆՏԻՔԱՆՆԵՐ ԳՆԱՑՈՒԹԻՒՆ N. 175 - 1 հ. 2. 700 Գ

Աշխարհն միշտ՝ ապերախտ և շահախնդիր աշխարհ մը եղած է և այդպէս ալ պիտի մնայ:

(Ծարունակելի)

ԿՐԹԱԿԱՆ ՏԱՐԵԼՐՈՒՄԻ ԽՈՂԵՐ

ՊԷՊՕ ՍԻՄՈՆԵԱՆ

Ազգային ընդհանրական մակարդակի վրայ կրթական ներկայ գոյավիճակը հայ դպրոցի ներկայ պատկերով յուսադրիչ չէ: Ներկայ իրականութենէն վաղուան վրայ նետուած հայեացքը աւելի մտահոգիչ պատկերներ կը պարզէ, որոնք մեզ կը սարսուացնեն հեռապատկերի մտալկումով:

Այս ափերուն վրայ հայ դպրոցին գոյառումն ու հանգրուանային զարգացումը իր սրտատուչ պատմական հոլովոյթով կազմեց յետ-եղեռնեան սերունդի վերապրելու և գոյատեւելու կամֆին սխրագին վկայութիւնը: Բոլոր հայկական դպրոցներն ալ ծնան համեստագոյն պայմաններէն, - հիւղաւաններու մէջ թիթեղաշէն, տախտակաշէն, - և հասան ներկայ կառոյցներու յարմարութեան և երբեմն շքեղութեան: Հայ ընտանիքն ու ծնողքը, որպէս ազգային ամբողջականութեան բաղկացուցիչները, մասնակից էին հայ դպրոցի նիւթական և բարոյական վերակառուցումին ազգային նախանձախնդրութեամբ: Յարաբերաբար հարուստն ու աղքատը հաւասարապէս (երբ հարուստները տակաւին չէին քաղցնիւցած) հայ դպրոցին մէջ կը տեսնէին իրենց գաւակներուն դաստիարակչական և ուսումնական ապագան: Հոն կը գտնէին իրենց ազգային գոյութեան և գոյատեւման ապահով ապաստարանը: Հայ լեզուն, հայկական շունչն ու ազգային դաստիարակութիւնը իրենց արժէքն ու կարեւորութիւնը ունէին հայ ընտանիքին համար: Որքան ալ այդ օրերուն պետական ծրագրի ճնշումը չկար, որ բնական պահանջքն է որեւէ երկրի կրթական քաղաքականութեան, հայկական դպրոցներէն այդ օրերու շրջանաւարտներ համալսարանական ուսման բարիքները վայելելով մասնագիտութիւններու տիրացան: Տեղական և օտար լեզուներու մէջ յառաջացան: Կեանքն ու այլախաւ շփումները ամբողջացուցին հայ դպրոցին վերագրուած թերին ու պակասը: Ազգային գետնի վրայ հիմնականը, - հայ մարդու պատրաստութիւնը, - որ առաջնահերթ առաջադրութիւնն էր հայ դպրոցին, կ'արդարանար: Ճիշդ է, թէ համալսարանական ուսումը, այս օրերու չափ ընդհանրացած չէր, - առանձնաշնորհում մը կը նկատուէր, - և ընդհանրապէս նախակրթարանէն և երկրորդական ուսումէն ետք արհեստներու և այլ գրաղումներու կը նուիրուէին: Ինչի՞ ալ հետեւէին, սակայն, ողնածուծով հայ էին և հայ կեանքի գործօն դերակատարներ...: Բայց այս բոլորին մէջ հայ ծնողին և հայ ընտանիքին յանձնառու կեցուածքն էին հայ դպրոցը կանգուն պահող սիւներէն մէկը: Յանձնառու կեցուածք մը, որ եթէ մէկ կողմէ կը բացայայտուէր ժողովրդական ասացուածքով, - շապիկը ծախելու գնով, - իր գաւկին ուսումնառութեան ապահովումին տնջանքով, միւս կողմէ՝ անոր հայեցիութեան հանդէպ ազգային նախանձախնդրութեամբ: Ա՛յս էր ընտանիք - դպրոց փոխ-յարաբերութեան ազգային որակի ոճը: Այս շրջագիծէն ներս կարելի չէ անտես անցնիլ նաե՛ւ հայ ուսուցիչներու այդ սերունդի գաղափարապաշտական նուիրումին առջեւէն, երբ տակաւին ուսուցչութիւնն ալ Business-ի կարգին չէր անցած և ի հեճուկս իննամսեայ վճարումներու, հայ ուսուցիչին առաջելութիւնն էր, - ի գին գրկանքներու, - հայ մարդու տիպարին սամբակուո կերտումը: Այդ սերունդի ուսուցիչներուն պատրաստած հայերով աւելի հայ էինք... քան՝ այսօր...:

Պատերազմ են առաջ [1975] Լիբանանահայ դպրոցը իր ծաղկումի և զարթոնքի շրջանը ապրեցաւ: Ոչ մէկ հայ դպրոց մնաց, որ իր սեփական և արդիական կառոյցով չօժտուի: Պետական ծրագիրներուն, ոչ ոնք պաշտօնական ֆննութիւններու սկստութեան նախապայմանն էին, պատշաճեցուցան հայեցի դաստիարակութիւնը: Ներդաշնակ կշռոյթով համընթաց ընթացա՛ւ անոնք: Արդիւնքները խօսուն էին: Այդ օրերուն հայ դպրոցը դատելու չափանիշը պետական ֆննութիւններու և համալսարան մուտքի յաջողութիւններն էին: Ջոյգ մարզերուն մէջ ալ հայ դպրոցը գերազանց դիրքի վրայ կը գտնուէր: Հարուստներու կողքին միջակ ու աղքատ դասակարգի զաւակները համալսարանական ուսման հետեւելու հնարաւորութիւնները կ'ունենային՝ յատկապէս Գալուստ և Կիւլլապի Կիւլպէնկեաններու Կրթաքոչակի Հիմնադրամի և Հ.Բ.Ն.Մ.ի համալսարանական ուսման յատկացումներով, որոնք ըստ պահանջի կը բաւարարէին, համալսարանականին ընթացիկ ծախսերը եւս գոհացնելով...: Լիբանանահայ ուսանողին առջեւ քա՛ց էին նաեւ Երեւանի պետական համալսարանի և Բարձրագոյն ուսման հիմնարկներու մասնագիտական և թեքնիկ ճիւղերու դարպասները: Վիճակագրական ցուցատախտակ մը լաւագոյնս պիտի արտացոլացնէր նախասկստութեան շրջանի մասնագիտական ուսման տիրացած, - բժիշկ, երկրաչափ, ճարտարապետ, փաստաբան, հիւանդապահուիչ, Business, հիւմանիդար գիտութիւններ, - երիտասարդ - երիտասարդուհիներու փաղանգ-փաղանգ խտացումը, որ հայ համայնքին փայլը կը կազմէր և հպարտութիւնը՝ հայ դպրոցին...: Գործող 44 հայկական դպրոցներու մէջ 13 հազարէ աւելի աշակերտներ կ'ուսանէին և համամարդկայինի - Լիբանանեանի կողքին հայեցի ուսման արժէքները կը փոխանցուէին: Հեզասահօրէ՛ն: Կաղացումներ չկայի՞ն, կային. անբաւարարութիւններ չէի՞ն զգացուեր, կը զգացուէին. գանգատող և խճրճող ծնողներ ալ կային: Բայց մէկ բան չկա՛ր, հաւաքական այլասերումը...: Անկախաբար գանգատողներէ, կա՛ր հաւատքը հայ դպրոցի հայակերտ առաջելութեան և զաւակներու ազգային պատկանելիութեան նկատմամբ...:

Պատերազմը [1975-1990] կասեցուց հայ դպրոցին խաղաղ ու հեզասահ վերընթացը: Փոխեց հայու մտայնութիւնն ու հոգեբանութիւնը: Խուճապահար արտագաղթը նօսրացուց երբեմնի շէն ու բարգաւաճ հայ գաղութը, որ հայկական Սփիւռքը առաջնորդող Կեդրոնն էր, յատկապէս իր կրթական ցանցով և հայեցի դաստիարակութեամբ պատրաստած սերունդներով, որոնց մէջ էիք թիւ չէին կազմեր ազգային-մշակութային գործիչներ, արուեստագէտներ, մտաւորականներ և գիրի նուիրեալներ: Հակառակ պատերազմի աւերիչ ու ֆանդիչ, խելագար մրրիկին, հայ դպրոցը կանգուն պահող ճիգերն ու համահայկական նախաձեռնութիւնները, - ներսէն թէ դուրսէն. - արդիւնաւորուեցան: Պատերազմի մոայլ և անագորոյն տարիներուն հայ դպրոցը գործեց և քայլ պահեց լիբանանեան կրթական կեանքին հետ: Հարթեց մե՛ծ ճիգերով տնտեսական դժուարութիւնները: Վերակառուցեց և վերականգնեց պատերազմին աւերածները: Ուսումնական ծրագիրներու գործադրութիւնները ետ չմնացին տեղականներէն...: Մէկ բան իրողութիւն է, որ հայ դպրոցը աշակերտի տագնապ չապրեցաւ այս օրերու պէս...: Ճիշդ է՝ դպրոցներ միացան գաղութի ֆանակական նօսրացումով, սակայն օտար վարժարաններ ափ առնող հայ աշակերտներու համեմատութիւնները այս աստիճանի չէին հասած...:

Յետ-պատերազմեան դպրոցը արտագաղթի հարուածով թէ օտար վարժարաններ յանախողներու անով աշակերտական տագնապ կ'ապրի: 30 դպրոցներու մէջ շուրջ 8000 աշակերտներ կ'ուսանին այսօր: Ջանգոււածեղ դպրոցներ, - կէս կատար դրուածքով, - հազիւ-հազ քաց կը մնան: Երկրին տնտեսական վերիվայրումներէն անշուշտ ցնցուած է հայ դպրոցը, ուսուցիչներուն ամսականները չկարենալ հոգալու աստիճան...: Բայց ցնցումը տնտեսականէն աւելի այլասերումի ախտին համաճարակն է, որ տարուէ-տարի կը տարածուի և կը ջլատէ հայ դպրոցին գոյատեւման պայքարը...: Հայ դպրոցին գոյութիւնը ազգային ինֆուրթեան պահպանման հիմնաքարն է: (→էջ 4)

ՈՒՒՍԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ
ՅՈՒՆԱՍՏԱՆ
- ՍԱՄՈՍ ԿՂՋԻ -

ՈՐ ԻՍԱՍՏՈՒՆ ԲՈՆԱԿԱԼ POLYCRATE-Ի
ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՏԱՐԻՆԵՐՈՒՆ [Զ.Ա. 538-522],
ՍԱՄՈՍԸ ԵԳԷԱԿԱՆԻ ԱՄԵՆԷՆ ԱՋԴԵՅԻԿ ԵՒ
ԲԱՐԳԱԻԱՃ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ ԵՂԱԾ ԷՐ:
ԲԱՅՅ ԱՅՍ ՄԵԾ ՂԵԿԱԿԱՐԸ՝ ՊԱՐՍԻԿՆԵՐՈՒՆ
ԼԱՐԱԾ ՄԷԿ ԾՈՒՂԱԿԸ Կ'ԻՅՆԱՅ:
ԵՒ ԽԱՉԵԼՈՒԹԵԱՄԲ Կ'ՍՊԱՆՆՈՒԻ:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ
ԼԿՐԵԺ ՌՈՒԲԷՆԵԱՆԻ



EFFALINIO TUNNEL-ից մեջ

Մեր այսօրուան գրութիւնը կը ձօնենք

1.- Հրեաներուն սուտ ազատութեան լոզունգներուն հաւատացող միամիտ հայերուն:

2.- Եւրոպական ժողովուրդները Հիթլերեան վտանգէն ազատող, Ս. Միութիւնը Աշխարհի առաջնակարգ պետութեան վերածող մեծ ղեկավար Սթալինին դէմ մինչեւ այսօր հայիչող արեւմուտքին ծառայ հայ գործակալներուն:

3.- 1988-էն սկսեալ Երեւանի Օփերայի հրապարակին վրայ «Ազատութիւն», «Ազատութիւն» գողացող, բայց կարծեցեալ «Ազատութիւն»ին գալէն յետոյ Հայաստանը լճող ապերախտ հայերուն:

Սամոս՝ Եգէականի կղզիներէն, մանաւանդ Rodos-ին, Chios-ին և Mitilini-ին հետ բաղդատաբար, շատ աւելի փոքր կղզի մըն է, հազիւ 477 քառ. քմ. տարածութեամբ:

Բայց այս փոքր կղզին, Զ. Ա. 538-էն մինչեւ 522 տարիներուն, Եգէականի ամենէն ազդեցիկ և բարգաւաճ պետութեան վերածուեցաւ:

Ինչպէ՞ս: Իմաստուն առաջնորդի մը շնորհիւ, որ ղեկավարելու և ստեղծագործելու և յառաջդիմելու տաղանդը ունէր:

Դժբախտաբար այս տեսակի իմաստուն և հանճարեղ ղեկավարներուն, պատմութեան մէջ և նոյնիսկ մինչեւ այսօր, անհրաւար «բռնակալ» անունը կը տրուի:

Դասական Յունաստանը, իր այս բռնակալ կոչուած ղեկավարներուն շնորհիւ, իր ոսկեդարը ապրեցաւ:

Յունաստանի մէջ, Զ. Ա. 550 թուականներուն, իմաստուն բռնակալ Pisistrate-ը Աթէնքը իր «մեծութեան» հասցընող ղեկավարներէն մէկն է:

Սամոսի մէջ ալ Polycrate-ը, այս փոքր կղզին Յունաստանի ամենէն ազդեցիկ պետութեան աստիճանին հասցնող տաղանդաւոր «բռնակալ»ը եղած է:

Զ. Ա. 590-թ.ներուն, Սամոսի մէջ, ազնուականներուն վարչաձեւը ժողովրդական ապստամբութեամբ մը կը տապալի, և իշխանութիւնը, ժողովուրդին անունով ձեռք կ'անցնեն՝ «բռնակալներու» խմբակ մը:

Այս բռնակալներուն շառաւիղէն է Փոլիքրաթը: Թէեւ ինքն ալ բռնակալ մըն է: Բայց երկրին բարօրութեան և ժողովուրդին օգտին համար աշխատող բռնակալ մը: Փոլիքրաթը, իշխանութեան գալէ յետոյ, կը խորհի, որ Սամոսի յառաջդիմու-

պատմագետին իր մասին ձգած հետեւեալ նշումը շատ հետաքրքրական է. «Փոլիքրաթ շատ կը վստահէր իր բախտաւորութեան: Օր մը, իր բարեկամը եղող Եգիպտոսի Փարաւոնը՝ Amasis-ի յանձնարարութեամբ Polycrate. իր բախտը փորձելու համար, ծովեզերք կ'իջնէ և ծով կը նետէ իր բացառիկ նրբութեամբ արժէքաւոր մատանին:

Ասոր վրայէն քանի մը օրեր կ'անցնին... Եւ կղզիէն ձկնորս մը, Փոլիքրաթին համար պալատին կը նուիրէ մեծ ձուկ մը, որու փորին մէջէն կը գտնեն Փոլիքրաթին ծով նետած արժէքաւոր մատանին:

Հերոդոտոսին այս պատմութիւնը, գերմանացիներուն առաջնակարգ բանաստեղծ Friedrich Schiller-ը (1759-1805), իր «Փոլիքրաթի մատանին» բանաստեղծութեամբ զայն անմահացուցած է իր փայլուն գրիչով:

Կեանքի մէջ «շատ բախտաւոր»ի համբաւ ունեցող Փոլիքրաթ, դժբախտաբար, շատ անբախտ վախճան մը ունեցած է:

Իր թշնամիներուն լարած մէկ ծուղակը իյնալով, Պարսիկ կառավարիչ (Xerxes-ին կողմէ կը ձերբակալուի: Եւ Պարսիկ դահիճները Փոլիքրաթը փայտէ խաչի մը վրայ կը հանեն, և, խաչելութեամբ, կ'սպաննեն մեծ ղեկավարը (Զ. Ա. 522 ին):

Խաչելութիւնը, նախաքրիստոնէական շրջաններուն ալ, մահապատիժի գործադրութեան կերպ մը եղած է:

* *

Փոլիքրաթի սպաննուելէն յետոյ, Սամոս իր իշխանութիւնը և փայլուն կեանքը կը կորսնցնէ, և քաղաքական որեւէ ուժէ զուրկ՝ հասարակ կղզիի մը կը վերածուի: Ըայց ժողովուրդին մէջ արմատացած էր Փոլիքրաթը սպաննող պարսիկներուն դէմ վրէժխնդրութեան զգացումը:

Եւ Զ. Ա. 479-թ.ին, Սամոսի նեղուցին մէջ, անոնք կը խորտակեն Պարսիկ ար-

քայ Xerxes-ի (Զսերքսես) նաւատորմը:

Այդ թուականէն յետոյ, Սամոս կղզին կ'ենթարկուի այդ ժամանակաշրջանի իշխող ուժերուն... Զանի մը դար յետոյ կ'սկսի Հռովմէական իշխանութիւնը: Ասոր կը յաջորդէ Բիւզանդականը: 1414-ին միջոց մը, Սամոս կղզին կ'ենթարկուի Ճե-նովացիներուն իշխանութեան: Եւ 1475-ին ալ կղզին կը գրաւեն Թուրքերը, որոնց իշխանութիւնը կը տեւէ մինչեւ 1821-թ.ը:

Նոյն տարին սկսող Յունական ազատագրական շարժումին՝ Սամոսի ժողովուրդը իր մասնակցությունը կը բերէ անհաւատալի ուժգնութեամբ: Թուրքերուն դէմ պայքարը տարիներ կը տեւէ: Թուրքերը չեն կրնար 1822-ին, Chios կղզիին մէջ ըրածնուն մահն, ջարդել Սամոսի բնակչութիւնը. ասոնց ցուցաբերած հերոսական պայքարին պատճառով: Եւ 1824-ին թրքական նաւատորմը, Հին Սամոսի մօտերը կը խորտակուի: Եւ Սամոսի մէջ պատերազմը կ'աւարտի Թուրքերուն պարտութեամբ:

Սամոսի ժողովուրդին թուրքերուն դէմ մղած պայքարը անոնց մէջ այնքան սարսափ կ'ստեղծէ, որ թուրքերուն մօտ առածի տեղ կ'անցնի «Սամոս երթալ կը նշանակէ՝ մահուան երթալ» խօսքը:

Մենք կը հաւատանք, թէ ժողովուրդներուն արեան մէջ կը գտնուի իրենց նախնիներէն ժառանգած առաելութիւններուն և տկարութիւններուն սերմերը:

Փոլիքրաթի պէս իմաստուն ղեկավարի մը ծնունդ տուող Սամոսցի ժողովուրդը բնական է, որ իր ժառանգած արեան մէջ պիտի կրէր Փոլիքրաթի տաղանդին սերմերը:

Եւ Սամոսցի ժողովուրդը, անկէ ժառանգած պայքարին ուժովը, յաղթեց Թուրքերուն:

* * *

Եւ մենք, 23 Մայիս 2002-ին, Սամոս կղզին գացինք, մեր ունեցած խոր հիացումով հանդէպ Փոլիքրաթին, Եպիկուրին և Արիսթարքին, տեսնելու համար անոնց ծննդավայր կղզին՝ Սամոսը:

Բայց, հիասթափութեան մատնուեցանք: Որովհետեւ ոչ մէկ տեղ չտեսանք այս «տաղանդ»ներուն յիշատակութիւնը կղզիին վրայ:

Նախ՝ գացինք Սամոսի հին մայրաքաղաքը՝ «Antique Samos»: որ 1955-ին Pithagorio՝ անունով մկրտուած էր:

Հին Սամոսի շատ պզտիկ մէկ մասին վրայ կառուցուած, նոր անունով՝ Փիթակորիօ գիւղաքաղաքը, ծովեզերեայ սրճարաններով ֆրանսական Սէն - Թրօփէզը կը յիշեցնէր:

Եւ Փիթակորիօ նաւահանգիստը կը պաշտպանուէր Փոլիքրաթին հիմնած հրաշալիքներէն՝ «ամբարտակ»ով: Թէեւ Փոլիքրաթին անունը չկար: Բայց իր ստեղծագործութիւնը կանգուն կը մնար:

Յետոյ մենք գացինք անոր հիմնած հրաշալիքներէն՝ Հերա-ի սըրբատեղին, որ «Heraion» կը կոչուէր: Դժբախտաբար, «Զանդիչ ժամանակ»ը, շատ բան չէր ձգած այս հրաշալի կոթողէն ալ: Բայց այս փլատակ վիճակին մէջ անգամ, տաճարին գրաւչութիւնը ակներև էր:



EFPALINIO TUNNEL-ին մուտքը

Այս սրբատեղիին չափերը աշխարհի հրաշալիքներէն Աթենքի Parthenon-էն երկու անգամ աւելի մեծ էին (108x56 մետր): Աւաղ, այս Յուշարձանին վրայ ալ, զինք կերտող Փոլիքրաթի մասին ոչ մէկ արձանագրութիւն կրցանք տեսնել:

Եւ յետոյ, այցելեցինք Փոլիքրաթի երրորդ «հրաշալիք-ստեղծագործութիւն»ը եղող «Tunnel D'Eupalinos»-է ֆրալիմոսի ջուրի փապուղին: Հին Սամոս քաղաքին մօտերը, լերան ստորոտը, Յունական ոճով կառոյց մը կը մատնանշէր փապուղիին մուտքը:

Մուտքին բաւական բազմութիւն էր հաւաքուած, զբօսաշրջիկներու (Ծար. Ը՝ Լջ 3)

ՈՒՆՏԱԳԼԱՅՈՒԹԻՒՆ ԴԵՊԻ ՅՈՒՆԱՍՏԱՆ...(Ծար. էջ 2-էն)

խումբեր: Բայց մեր ուշադրութիւնը գրաւեց մանաւաճնդ, Յոյն դպրոցական երախաներ: Ասոնք եկած էին իրենց նախնիներուն կերտած հրաշալիքները տեսնելու:

Տասը հոգիները խումբերով, կարգաւ ներս առին մեզ: Ծատ նեղ նրբանցքով մը, սանդուխներէն վար իջնելով, հասանք բուն փապուղիին: Երկու մեթր լայնքով և երկու մեթր բարձրութեամբ այս ջուրի փապուղին, 1350 մեթր երկարութեամբ, ելեքտրականութեամբ լուսաւորուած էր:

15 տարիներ տեւած այս փապուղիին շինութիւնը կ'աւարտի Ք. Ա. 524-ին: Ինչպէս վկայած է պատմաբան Հերոթոտոս՝ իսկական հրաշալիք մըն է այս փապուղին: Մարմարանման կարծր քարեր էին փապուղիին պատերը:

Կը տարուիս հարց տալու դուն քեզի, թէ ասկէ 2500 տարիներ առաջ, ինչպէ՞ս յաջողած էին այս կարծր ժայռերը, 1350 մեթր երկարութեամբ, լերան երկու կողմերէն ծակելով յառաջանալ և, սքանչելի ճշգրտութեամբ, միանալ իրարու:

Եւ այս փապուղին տեսնելէ յետոյ, Յոյներուն հանդէպ մեր ունեցած հիացումը աւելի շեշտուեցաւ:

**

Սամոսի այս Eupalinos-ի փապուղիին տրուած այցելութենէն յետոյ, հոգեկան տարբեր հանդարտութիւն մը զգացինք մեր մէջ: Իրապէս ալ՝ մարդկային տաղանդը պաշտամունքի արժանի էր, ամէն տեսակէտով: Այս մտածումներով ալ զացինք Սամոսի հարաւ-արեւելքը գտնուող Psili-Amos ծովափ-զբօսավայրը:

Ջուրի մակերեսին, ծառերով շրջապատուած ճաշարան մը կար: Սեղան մը նստանք: Սքանչելի տեղ մըն էր: Հազիւ երկու սեղան կար մերինէն զատ: Հանդարտութիւն, ծով, արեւ և միջէն ծովը իջնող ծառեր:

Բնութիւնը ինքնին, հրաշալիք մըն է արդէն: Իսկ բնութեան մէջ երազելը՝ շատ հեշտ...: Բայց այս անոյշ երազը շատ չտեսց: Եւ ցաւով նկատեցինք, թէ մեր նստած սեղանին ճիշդ դիմացը տեսնուող՝ հազիւ երկու քիլոմետր հեռաւորութեան վրայ եղած հողերը այսօր, դժբախտաբար, Թուրքիա կոչուած երկիրն է: Եզէական Անաթոլիայի ծովափները. որոնք, այսօր, թրջական վայրենի ձեռքերով պղծուած են:

Այդ հողերը, քաղաքակրթութեան օրրան եղող կեդրոններ էին: Սամոս-ի գրեթէ ճիշդ դիմացը՝ կայ Ephesos-ը իր աշխարհի հրաշալիքներով: Անկէ քիչ մը աւելի հարաւը՝ Priene - Milet-էն: Յետոյ՝ Didyma-ն, Apollon-ի սրբատեղին: Տիտիմա-ի Ապողոնի մարմարեայ յուշարձանը, կրնանք ձեզ վստահեցնել, թէ աշխարհի ամենափայլուն հրաշալիքն է: Զիչ մ'աւելի հիւսիսը՝ Pergamum-ը: Եւ Ephesos-եփեսոս-էն 100 քլմ. արեւելք՝ Hierapolis-ը, և անկէ քիչ մը հարաւ՝ Aphrodisias-ը, շատ աւելի հարաւը՝ Halikarnassos-ը:

Բոլոր այս նշուած վայրերը՝ Յունական դասական քաղաքակրթութեան հրաշալիքներն են, որոնց նմանը, նոյնիսկ Յունաստանի մէջ, կարելի չէ գտնել:

Եւ այս բոլոր հրաշալիքները այսօր, մնացած են բարբարոս Թուրքին ձեռքը: Եւ մենք, Թուրքիայէն վերջնականապէս հեռանալէ առաջ, զանոնք այցելելու առիթը ունեցանք:

**

Այսօր, Սամոս կղզի մեր այցելութենէն յետոյ, գրեթէ երկու ամիսներ անցած են: Եւ մենք, դեռ այս այցելութեան տպաւորութեան տակ կը գտնուինք:

Բայց այսօր, հայկական անուն կրող թրջական թերթի մը մէջ, լուր մը կարդացինք, որուն հետեւանքով խոր յուսալքութեան մատնուեցանք:

«Թուրք-հայ համաձայնութեան յանձնախումբ»ի անդամները՝ բանակցելու համար թրջական Bodrum քաղաքը գացեր են: Պոտրումը մեր վերը նշած պատմական Halikarnassos-ն է: Եւ Պոտրումը այսօր, թրջական ամենէն յարգի զբօսաշրջական կեդրոնն է:

Եւ այս պարոնները, «բանակցելու համար», ուրիշ տեղ չէ՞ն գտեր: Եւ մտածեցինք, թէ ասկէ քանի մը տարիներ առաջ, դահիճ Յունաստան եղբայրները և իրենց ընկերները, Թուրքերուն կողմէ Antalya տարուած էին [որ թրջական ուրիշ շատ ծանօթ զբօսաշրջական կեդրոն մըն է], իբր թէ քննական պտոյտ - այցելութեան համար: Բայց իրականութեան մէջ, այս «հիւրասիրութիւն»ը Թուրքերուն աւանդական ձեւն է՝ անձերը և հոգիները կաշառելու...:

Յետոյ, 27 Հոկտեմբեր 1999-ին, այս Յունաստան եղբայրները, Հայաստանի Ազգային Ժողովին մէջ, Կարէն Տեմիրճեանը, Վազգէն Սարգսեանը և իրենց ընկերները նահատակեցին: Եւ այս ողբերգութեան հետեւանքով, Հայաստանի հիմերը խախտեցան:

Արդեօք թրջական Bodrum քաղաքը զացող Վան Գրիգորեանի, Դաւիթ Յովհաննիսեանի, Անդրանիկ Միհրանեանի և Ալեքսանդր Արզումանեանի երեւան վերադարձէն յետոյ, Հայրենիքը ի՞նչ տեսակի ողբերգութեան պիտի ենթարկուի...:

CRISIS IN TURKEY THE IMPORTANCE OF TURKEY

In its current issue dated July 20th-26th 2002. THE ECONOMIST has on its cover as one of its four master themes "TOTTERING TURKEY (and why it matters).

On Page 11, the crisis caused by the defections of ministers from Ecevit's party are discussed, while on pages 18-20 the economic and political status of Turkey is evaluated.

Ecevit is the bullhorn of the Military who is the actual ruler of the country. If it were up to him, he would have resigned long time ago as he is too ill to govern. His two partners in the trika would welcome this, but it is not in the interest of the MILITARY.

After the defections, Ecevit first said that there would be elections in November, but then "changed" his mind... In the meantime his foreign minister Cem, his assistant prime minister Ozkan and his finance minister Dervish resigned and formed a party called "NEW TURKEY". However, under American pressure and pressure from the generals, Dervish was forced to remain in the government in order not to throw Turkey into economic turmoil and be able to obtain the remaining 16 billion dollars from the IMF.....

One of the coalition partners, Mesut Yilmaz is advocating Turkey's joining the European Union. (EU). The other partner, the ultra-right racist nationalist party of Devlet Bahçeli is opposed to joining the EU : the Military is not eager to join the EU for many reasons.

The Military is now in power and they do not want new democratic elections, the outcome of which they can not predict. Polls indicate that the favorite is now Islamist Tayyip Erdogan's AK (White, Pure) Party. The Military does not want them to come to power: they have previously forced out Erbakan and they can not tolerate anyone with an Islamist agenda.

